№ 202 ՇԱԲԱԹ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 202

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելէֆօն № 67.

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Սեպտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 4 րուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома .. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ղարիբջա Աւետեանը, Բալասան Զարգարեանը, Մելանիա, Կարապետ, Հեղինէ և Գուրգէն Աւետեանները և Քրիստափոր Անիեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, երկրորդն իր սիրելի աղջկայ, միւսներն իրանց անմոռանալի մօր և վերջինն իր զոքանչի՝

ՀԵՐԻՔՆԱԶ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԱՒԵՏԵԱՆՑԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 14-ին։
Ամբիծքը շաբաթ, սեպտեմբերի 17-ին, երեկոյեան ժամը 7-ին։
Յուղարկաւորութիւնը կիրակի, սեպտ. 18-ին, առ. ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Վօզնէսէնսկայա № 8) դէպի ս. Նշան եկեղեցին։ Մարմնի ամփոփումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 901. 1—1

ՀՐԷԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

I

Անդրկովկասում հրէական խնդիր գոյութիւն չէ ունեցել մինչև այժմ։

Եւ պէտք է յուսալ, որ նա գոյութիւն էլ չի ունենայ և ապագայում։

Մենք աչքի առաջ ունենք հրէական խնդիրը այն ցաւոտ և տանջալի արտայայտութեամբ, որպիսին յատուկ է Ռուսաստանի արեւմտեան նահանգներին։

Բայց կան մասնաւոր տրամադրութիւններ՝ ստեղծելու հրէական խնդիր և մեր երկրում։ Կան դժբաղդաբար։ Ուստի այդպիսի տրամադրութիւնները առաջին րոպէներից իսկ պէտք է հանդիպեն հասարակական կարծիքի կողմից ամենավճռական բողոքի և մերժման, որպէսզի չը մնայ ոչ մի նշոյլ, անգամ հեռաւոր, թէ հրէական խնդիրը կարող է մեզանում հանդէս գալ իր մռայլ գունաւորութիւններով։

Որ հրէաների թիւը մեր երկրում տարէ-տարի աւելանում է, դա իրողութիւն է։ Որ նորագոյն վաճառականութեան և ընդարձակվող միջազգային դրամական յարաբերութիւնների մէջ հրէաները սկսում են ազդեցիկ դերեր ստանձնել, դա անհերքելի է։ Սակայն այդ հանգամանքը ամենեւին չէ կարող թելադրել հակահասարակական զգացմունքներ դէպի հրէական տարրը մեր երկրում և սննդել տրամադրութիւններ, որոնք այնքան անպատուաբեր արտայայտութիւններ են ստացել Ռուսաստանի ներքին նահանգներում։

Մայրաքաղաքի լրագիրներից մէկի Թիֆլիսի Թղթակիցը, արձանագրելով որ հրէաների թիւը Կովկասում վերջին վեց տարում—1904-ից մինչև 1910 թւականը—աւելացել է 28 տոկոսով, հրաւիրում է կառավարութեան և հասարակութեան առանձին ուշադրութիւնը այդ երևոյթի վրա և առաջարկում է միջոցներ ձեռք առնել՝ սահմանափակելու հրէաների գաղթը դէպի Կովկաս։

Թղթակիցը ասում է ի միջի այլոց հետևեալը.

Մեծ քաղաքները և փոքրներից մի քանիսը դարձել են հրէական տենչանքների առարկաներ։ Հրէաները հասկացել են, որ Իսրայէլի զաւակների համար լուրջ վտանգ ներկայացնում են միայն հայերը, ուստի դէպի հայաշատ տեղերը հրէան գնում էր փոքր թւով և երկիւղով։ Իսկ այնտեղ, ուր հրէան իրան զգում էր մի ամբողջ գլխով բարձր տեղացիներից, նա բազմանում էր և աճում, չը վախենալով ոչ մի մրցումից։ Հրէան գիտակցաբար մուտք էր գործում այնտեղ, ուր տնտեսական կեանքի կարգադրիչները վրացիներն էին...

Հանգուցեալ իշխան Գ. Գոլիցինը մի անգամ սաստիկ զայրացած տեղացիների ինչ որ արարքից, ասաց ինձ լըջօրէն.

— Եթէ հրէաները այնքան անմաքուր չը լինէին բարոյապէս, ես խնդրամատոյց կը լինէի, որ ամբողջ Կովկասը մտցվէր հրէական բնակութեան շրջանագծի մէջ։ Մի տասն տարուց յետոյ ամբողջ երկիրը կընկնէր հրէաների ձեռքը և հրէաների տնտեսական գերազանցութիւնը կը սթափեցնէր տեղացիներին, որոնք խելոք կը խաղաղվէին և կը փոխէին իրանց վերաբերմունքը դէպի Ռուսաստանը, խնդրելով կառավարութիւնից ազատել իրանց հրէական գերութիւնից։ Հազար հրէան աւելի գործ կը կատարէր, քան 50,000-անոց զօրքը։

Թղթակիցը թշնամաբար է վերաբերվում ոչ միայն հրէաների, այլ և լեհերի, յոյների, լատիշների և առհասարակ ոչ-ռուս տարրերի երևան գալուն Կովկասում, մերժելով միևնոյն ժամանակ և տեղացիների պաշտօններ ստանձնելը երկրի հաստատութիւններում և հիմնարկութիւններում։

Այդպիսի տրամադրութեամբ տոգորված մտածողութիւնը, անկասկած, ոչ մի խելացի ելք չէր կարող գտնել հրէական ազդեցութեան դէմ՝ մաքառելու համար, եթէ ոչ միայն սահմանափակում, հալածանք և վարչական բռունք։

Դա հիմնական մոլորութիւն է՝ ապարդիւն և միևնոյն ժամանակ բոլորովին հակառակ հետևանքների յանգող։

Մաքառումը ուրիշ ասպարէզի վրա պէտք է դնել և բոլորովին ուրիշ, աւելի կուլտուրական և խելացի միջոցներով։

Այդ մասին միւս անգամ։

Ս. Քալանթար

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 սեպտեմբերի

Բերլին. — Իտալական կառավարութիւնը հեռագրեց Բ. Դրան, որ վճռել է զէնքով գրաւել Տրիպօլիսը և Կիրէնայիկէն։ Թիւրքիան պէտք է հոգայ, որպէսզի այդ քայլը դիմադրութեան չը հանդիպէ Տրիպօլիսի օսմանեան ներկայացուցիչների կողմից. համաձայնութեան յետագայ պայմանները կարելի է որոշել երկուստեք զիջումներով, որպէս զի դրութիւնը վերջնականապէս կանոնաւորվի։ Թիւրքիայի վճռական պատասխանը սպասվում է 24 ժամվայ ընթացքում։ Իտալական կառավարութեան հեռագիրը ուղարկվեց Կ. Պոլսի իտալական հաւատարմատարին։ Հեռագրում նշանակված 24-ժամեայ ժամանակամիջոցը սկսվում է հեռագիրը Թիւրքաց կառավարութեանը յանձնելու րոպէից։ Հեռագրի բնագիրը հաղորդվեց նաև Հռոմի Թիւրքաց հաւատարմատարին։ Առ այժմ յայտնի չէ, նոտան յանձնվա՞ծ է արդեօք Բ. Դրան թէ ոչ։

—

Կ. Պոլիս.—Իտալիայի ուլտիմատումը յանձնվեց Բ. Դրան։

—

Հռոմ.—Արտաքին գործերի մինիստրը հեռագրեց Աթէնքի, Բելգրադի, Ցետինէի, Սոֆիայի և Բուխարէստի միսիաներին և Սալոնիկի, Ադրիանուպոլսի, Եանինայի, Վալօնի, Ուսկիւբի, Պրիզրէնի, Սկիւտարի, Մօնաստիրի և Դուրացցօյի հիւպատոսարաններին, թէ ի նկատի ունենալով, որ Թիւրքիան յամառութեամբ դիմադրում է Իտալիայի ամեն մի օրինական տնտեսական գործունէութեանը Տրիպօլիսում և Կիրանայիկում, նաև նկատի առնելով այն վտանգը, որի մէջ գտնվում են նահանգներում իտալահպատակները, կառավարութիւնը անհրաժեշտ գտաւ լուծել տրիպօլիսեան հարցը համապատասխան Իտալիայի շահերի ու արժանապատւութեան. բայց ինչ տեսակի էլ որ լինեն այն միջոցները, որոնց նա ստիպված կը լինի դիմել, նրա քաղաքականութեան հիմունքում դարձեալ կը մնայ Բալկաններում տէրրիտօրիալ status quo-ն պահպանելու և եւրօպական Թիւրքիան ամրապնդելու որոշումը։ Իտալական կառավարութիւնը ոչ միայն չէ ցանկանում խրախուսել որևէ շարժում ընդդէմ Թիւրքիայի Բալկանեան թերակղզու վրա, այլ հաստատ վճռել է կրկնապատկել իր ջանքերը, որպէսզի հէնց այս րոպէին վերանայ այդօրինակ փորձի հնարաւորութիւնը։ Այդ պատճառով բոլոր յետագայ դէպքերում Իտալիայի ներկայացուցիչները պէտք է հաշւի առնեն իտալական կառավարութեան քաղաքականութեան յիշեալ վերջնական նպատակը։

—

Լոնդոն.—Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, տեղիս դիպլոմատիական շրջաններում կարծում են, թէ հարցի ոչ մի մասնակի լուծում Իտալիային չի գոհացնի. Տրիպօլիսի նկատմամբ արշաւանքը հաւանական է ներկայանում։ Ենթադրում են, թէ արշաւելու համար բոլոր պատրաստութիւնները արդէն տեսնված են։ Թէ Թիւրքիան և թէ Իտալիան տեղեկութիւն ունեն, թէ մեծ պետութիւնները որոշել են պատերազմի դէպքում միանգամայն չէզոքութիւն պահպանել։

—

Վիեննա. — «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» թիւրքական պաշտօնական աղբիւրներից հաղորդում է, որ Թիւրքաց կառավարութիւնը կարող է Իտալիայի հետ բանակցութիւնների մէջ մտնել սոսկ տնտեսական հարցի առիթով և ոչ բնաւ քաղաքական արտօնութիւնների խնդրի վերաբերութեամբ, արտօնութիւններ, որոնք կազմում են Թիւրքիայի սուվերէն իրաւունքը։ Թիւրքիան պատրաստ է այդ իրաւունքը պաշտպանել իր ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով։ Տրիպօլիսում ոչ մի միջադէպ տեղի չէ ունեցել. օտարազգիների դրութիւնը բոլորովին ապահով է. Թիւրքիան հանգստութեամբ սպասում է դէպքերի. բայց եթէ Տրիպօլիսում երևան իտալական զօրախմբեր կամ որևէ ձեռնմխութիւն լինի, այդ դէպքում օսմանեան կառավարութիւնը այդպիսին կը նկատէ իբրև casus belli (պատերազմի պատճառ)։

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, իբր Ցունաստանը Սոֆիայում և Բելգրադում առաջարկութիւն է արել՝ մշակել գործողութիւնների մի ընդհանուր ծրագիր Թիւրք-իտալական ընդհարման դէպքում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Կովկասի փոխարքայութեան վերաբերութեամբ Դումային օրինագիծ ներկայացվեց՝ կովկասեան նահանգների ժամանակաւոր հպատակ գիւղացիների կախումը՝ կալուածատէր-հողատէրերից՝ վերացնելու։

—

Ստոկհոլմ.—Բիւրոյի տեղեկութիւնների համաձայն, պալատի ընտրութիւնները, որոնք առաջին անգամ կատարվել են համեմատական սիստեմով ընդհանուր ձայնատուութեամբ, տուել են ընդամենը 204 պատգամաւորներ, որոնցից 61 աջակողմեան, 87 ձախակողմեան, 56 սօցիալիստ։ Կաբինէտի փոփոխութիւնը համարվում է անխուսափելի։ Սօցիալիստները յայտնում են, որ չեն կամենում մտնել նոր կաբինէտի մէջ, բայց և այնպէս պահանջում են, որպէսզի կաբինէտի կազմի մէջ մուտք չունենան ծայրայեղ աջակողմեանները։

—

Վիեննա.—Իշխանութիւնը պատուիրեց Վիէննայի քաղաքային ինքնավարութեան՝ բանալ փակած չեխական դպրոցները։

—

Բուդապեշտ. — Ունգարացի յայտնի արեւելագէտ Վամբէրին «Բուդապեշտի-Խիրլապ» լրագրում գրում է, որ բոլորովին ի զուր կը լինի այսուհետեւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

V

Ազգ. երեսփ. ժողովը եւ տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսը

Կ. Պոլիս, 28 օգոստոսի

Իմ առաջին գործերից մինն եղաւ, ժամանելով Պոլիս, ներկայ լինել ազգային երեսփոխանական ժողովի նիստին և ներկայանալ պատրիարքական տեղապահ Վահրամ արքեպիսկոպոս Մանկունուն։

Եւ ուրբաթ, օգոստոսի 19-ին, ժամը 2-ին կէսօրից յետոյ, ես, Մելքոն Կիւրճեանի առաջնորդութեամբ, գնացի Ղալաթիայի եկեղեցին, որի խորհրդարանի մէջ է կայանում ազգային ժողովը իր նիստերը, չունենալով իր համար առանձին յարմար շինութիւն։

Թէև նիստի բացումը նշանակված էր ժամը 2-ին, բայց երեսփոխանները դեռ չէին եկել։ Ինձ յայտնեցին, որ Մանկունի արքեպիսկոպոսը խորհրդարանին կից դահլիճումն է, և ես շտապեցի ներկայանալ նրան։

Մանկունի սրբազանին ես մի անգամ տեսել էի Էջմիածնում, Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ, 1884 թ., ուրեմն սրանից 27 տարի առաջ։ Ես գտայ այժմ մի ծերունի եպիսկոպոս, բայց նախկին աշխոյժը, կորովը դեռ պահած եպիսկոպոս, և այնքան պահպանած իր մտաւոր կարողութիւնները և յիշողութիւնները, որ նա անմիջապէս յիշեց, թէ ինչպէս ես, 1873—4 թ. թ., դեռ դպրոցական աշակերտ, Թաւրիզից թարգմանութիւններ էի ուղարկում իրան, Էջմիածին, «Արարատ» ամսագրի մէջ տպելու համար, իմ քոյր Սոֆիայի հետ միասին, որ թարգմանել էր Շահան Ջրպետի մի գրուածքը, թէ ինչպէս գրագրութիւն էի անում իր հետ, որպէսզի պարսկահայերի համար ևս յօրինվի թիւրքահայերի ունեցած ազգային սահմանադրութեան նման մի սահմանադրութիւն։

Սրբազանը ինձ ցոյց տուեց սիրալիր և համակրական ընդունելութիւն, ծանօթացրեց հետզհետէ մտնող երեսփոխանների հետ, հարցուփորձ արեց Կովկասի հայութեան, Էջմիածնի դրութեան և այլ գործերի մասին, ցաւ յայտնեց, որ այդօր չը պիտի կարողանամ լսել ազգային ժողովի մէջ կարևոր հարցերի քննութիւնը և լուծումը, որովհետև դժուար թէ օրէնքով պահանջված 71 երեսփոխանների ներկայութիւնը տեղի ունենայ. իսկ հարցերը,—յարեց ծերունի տեղապահը,—շատ լուրջ և կարևոր են, ինչպէս կաթողիկոսական հարցը, Հայաստանի մէջ տեղի ունեցող հարստահարութիւնների հարցը և այլն։ Ամառային արձակուրդների և խոլերայի պատճառով երեսփոխանները անկարող են գալ նիստին, բայց, յամենայն դէպս, եթէ 40 երեսփոխաններ գան, նիստը կը բացվի և մի քանի ատենական գործողութիւններ կը կատարվեն։

Այդտեղ նստած էին Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան, պատրիարքական փոխանորդ Դուրեան վարդապետ և Երուսաղէմի պատրիարքական փոխանորդը։ Առաջին երկուսի հետ ես ծանօթ էի. վերջին երկուսի հետ ծանօթացրեց ինձ Մանկունի սրբազանը։ Եւ որովհետև հետզհետէ գալիս էին երեսփոխանները, ես ծանօթացայ դօքտօր Թորգոմեանի, Ճանկիւլեանի, Բ. ատենապետ Հրանտ Ասատուրի, ատենադպիր և գրող Օննիկ Զիֆթէ-Սարաֆի, Հայկ Խօճասարեանի (որ կարգված է պատուիրակ՝ Երուսաղէմ գնալու) և այլոց հետ։ Շատ համակրելի և պատուական դէմք է դօկտօր Վ. Թորգոմեանը, որին թէև առաջին անգամ էի տեսնում, բայց իբրև գրող վաղուց ճանաչում էի. նա էր, որ երբ կուսակցական կրքերը սաստիկ բռնկվեցին ազգային ժողովի մէջ, լաց եղաւ և աղերսեց խնայել տարաբաղդ հայ ժողովրդին։

Վերջապէս եկան յայտնելու տեղապահ սրբազանին, որ մօտ 40 երեսփոխաններ ներկայ են և նիստը կարող է բացվել։ Տեղապահը խնդրելով ինձ, որ այցելեմ իրան պատրիարքարանում, առանձին, ինչ որ իմ փափագս ևս էր, կանչեց մի բարապան և պատուիրեց տանել ինձ հիւրերին յատկացված բաժինը ազգային ժողովի սրահի մէջ և տեղ տալ։ Երբ մտայ սրահը, տեսայ, որ հիւրերին յատկացված բաժինը արդէն լցված էր Ռուսաստանից եկած այցելուներով։ Ինձ համար բարապանը բերեց մի աթոռ, ես սկսեցի դիտել ժողովը։

Ազգային ժողովի սրահը, բաւական ընդարձակ, բաժանված է երեք մասի. ամենամեծ մասը յատկացված է երեսփոխաններին. մի նեղ մասը, որ բաժանված է առաջինից վանդակապատով, յատկացված է հիւրերին և մամուլի ներկայացուցիչներին. ապա ետևի մասը յատկացված է հասարակութեան. այդ մասը փակվում է, երբ ժողովը դռնփակ է լինում, իսկ, սովորաբար, ժողովը հրապարակային է։ Ժողովի վերին մասում դրված է դիւանի սեղանը, որի առաջ նստած են ատենապետը, իր օգնականը և ատենադպիրը։ Նրա դէմ յանդիման, վերջին մասում, դրված է պատրիարքի գահը, որ այս անգամ թափուր է, և տեղապահը նստած է գահի կողքին մի աթոռի վրա։ Դիւանի աջ և ձախ կողմերին շարված են երեսփոխանների աթոռները. «ազատականները» գրաւել են ձախակողմեան աթոռները. նրանց առաջ նստած են եկեղեցական երեսփոխանները. աջակողմեան նստարանների վրա բազմած են կենտրոնի խմբակցութեան կամ ազատականների կողմից անճշտօրէն «պահպանողական» կոչված երեսփոխանները, որոնց մեծամասնութիւնը պատկանում է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան, որոնք կազմում են ազգային ժողովի տիրապետող մեծամասնութիւնը, մինչ «ազատականները» կազմում են փոքրամասնութիւնը։ Ազատականների մեծ մասը բաղկացած է դաշնակցականներից, բայց կան և ոչ-դաշնակցականներ, ինչպէս դօկտօր Թորգոմեանը, Ստեփան Գարայեանը, Համբարձում Պօյաճեանը (Մուրատ) և այլք։ Կենտրոնի խմբակցութեան աչքի ընկնող դէմքերն են Դ. Տէր-Մովսէսեան, որ լիդերի դերն ունի, Վահան Թէքէեան, Արշակ Ալպօյաճեան, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Մ. Ազարեան էֆէնդի (ազգային ժողովի առաջին ատենապետը), դօկտօր Ն. Տաղաւարեան և ուրիշ շատեր, որոնք այդ օրը բացակայ էին ժողովից, ինչպէս բացակայ էին և «ազատականներից» մի քանիսը։

Նիստը բացեց տեղապահ սրբազանը մի կարճ աղօթքով. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա մեզ, Տէր»։ Ես հետաքրքրվեցի տեսնել, թէ արքեպ. Շահրիկեան Յարութիւնը ոտքի կը կանգնէ՞ նոյնպէս, բայց դուրս եկաւ, որ նա այդ օրը բացակայ էր. միւս դաշնակցական երեսփոխանները՝ Ռուբէն Զարդարեան, Վահան Փափազեան և ուրիշներ ոտքի էին կանգնել։

Հասարակութեան համար յատկացված մասը լի էր հանդիսականներով, գլխաւորապէս գաւառացիներով, որովհետև օրակարգի մէջ նշանակված էին Հայաստանի հարստահարութիւնների և կաթողիկոսական ընտրութեան հարցերը։

Ատենապետ Հ. Ասատուր, բանալով նիստը ժամը 3-ին, յայտարարեց, որ երեսփոխանների 71 օրինական թիւը չը լինելու պատճառով՝ ժողովը կը զբաղվի ատենական գործողութիւններով։ Պէտք է ասել, որ յաճախ «ատենական գործողութիւնների» անունով ժողովը որոշում և քննում է հարցեր, որոնք էական նշանակութիւն չունեն, ունեն միայն ձևական նշանակութիւն. բացի դրանից՝ ներկայ եղող երեսփոխանները ծանօթանում են հարցերի մանրամասնութեան հետ, որովհետև կարդացվում են հարցին վերաբերեալ գրութիւնները, տեղեկագրերը, լինում են վիճաբանութիւններ, միայն որոշումներ չեն տրվում, մինչև որ 71 երեսփոխան ներկայ չը լինեն։ Յաջորդ նիստին՝ արդէն շատերի համար հարցը պարզաբանված է լինում։ Այս անգամ առաջին հարցն էր Հայաստանի մէջ կատարվող հարստահարութիւնների խնդիրը։ Առաջարկվում էր նորից մի ազդու թակրիր ուղղել կառավարութեան։ Հմայեակ արքեպ. Դիմաքսեան, որին պատկանում է այդ հարցը արծարծելու առաջնութիւնը վաղուց պաշտպանել իսլամը. Նա ոչնչացվելու է և արժանի չէ լաւագոյն վիճակի կուլտուրայի տեսակէտից, որի թշնամի և նա հանդիսանում է. մահմեդական պետութիւնները պէտք է բաժան-բաժան լինեն, որովհետև նրանցից ոչ մէկը ներքին պետական ստրուկտուրա չունի. մահմեդականները բնաւորութիւնից զուրկ են, չը գիտեն անգամ թէ ինչ է նշանակում այդ խօսքը. նրանք աղօթում են, բայց ոչ աշխատում. չը գիտեն ուրիշ ոչ մի այլ զգացմունք, բացի կրօնականից. չունեն ոչ մի ցանկութիւն. սահմանադրական շարժմանը Թիւրքիայում այժմ արդէն չէ կարելի լուրջ նշանակութիւն տալ. Թիւրքիայի դրութիւնը վատթար է նախկին կացութիւնից. 300 միլիօն մահմեդականների վերածնութիւնը՝ երևակայական հէքիաթ է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

Աստրաբադ.—Մահմէդ-Ալիին գերելու լուրը սուտ դուրս եկաւ։ Պարսից կառավարութիւնը, յիրաւի, դրդեց Թիւրքմէններին ողջ-ողջ բռնել Մահմէդ-Ալիին, սակայն անաջող։

Թաւրիզ.—Երկուշաբթի օրը Շուջա-ուդ-Դօվլէն յարձակւում գործեց Թաւրիզի վրա չորս կողմից։ Կռիւը, որ տևեց մինչև երեկոյ, մնաց անհետևանք։ Շուջա-ուդ-Դօվլէի ձիաւորները, թողնելով ֆէդայիներից խլված քաղաքամերձ Շամհազան գիւղը, վերադարձան իրանց նախկին դիրքերը։ Երկու կողմերի կորուստները աննշան են։

Բարֆրուշ.—Բարֆրուշի նախկին նահանգապետ Ալլա-ուդ-Միւլքը և Արշադ-ուդ-Սալթանէն՝ Մուրդախի որդին՝ ներումն ստացան։ Բայց նրանք հրաժարվում են հեռանալ հիւպատոսական գործակալի տնից։

Թէհրան.—Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն, Նուբէքբանի մօտերը կառավարական զօրքերը մեծ ճակատամարտ են ունեցել Սալար-ուդ-Դօվլէի հրոսակախմբերի հետ։ Վերջինները կորցրել են 400 սպանված, 200 գերի և 7 թնդանօթ, և յետ են նահանջել դէպի Համադան, հալածվելով հակառակորդներից։

ՆԱՄԱԿՆԵՐ ՂԱՐԱԴԱՂԻՑ

III

Ղուլուղի գիւղի դէպքից յետոյ ազգային գործիչների և նրանց յետնորդների վարկն ու դիրքը, հեղինակութիւնն ու հմայքը համարեա բոլորովին նսեմացել էր ոչ միայն խաների, Թուրքերի, այլ և բուն հայ ժողովրդի մէջ։ Բայց որովհետև սովորաբար օրհասական արջերը աւելի կատաղի են դառնում իրանց կեանքի վերջին րօպէներին, ահա այդպիսի մի ճիգ էլ գործադրեցին Ղարադաղում մնացած Յակովբ վարժապետն ու իր գործակից ընկերները նորից կենդանանալու, նորից ժողովրդին ահ ու զարզանդի մէջ պահելու կամ միանգամայն տապալելու։

Նրանց շանտաժային ծրագիրները յօդս ցնդեցին, «քեօխվաներին հնձելու» որոշումները անաջողութեան, աւելի ճիշդ՝ ընդդիմադրութեան հանդիպեցին, և ահա այդ պարոնները նոր մանեօվրների ձեռնարկեցին։

Խրախուսված՝ Թաւրիզի նամակներից և անցած-դարձած դէպքերին կարևորութիւն չը տալուց, «մեր ազգակերները» 15 հոգուց բաղկացած մի ձիաւոր խմբով անակնկալ ներս խուժեցին Խանագեահ գիւղը. Թէ ինչ նպատակով՝ այդ միայն իրանք գիտեն և քիչ ու միչ էլ խանագեահցիք կարողացան հասկանալ։

Վարժապետ-ատամանը պահանջեց ամբողջ խմբին մի տեղ տեղաւորեցնել, բոլոր ձիերը մի գոմում կապել և պատուիրել ժողովրդին, որ ոչ մի տեղ չը գնայ։

Գիւղացիք յանկարծակիի եկած ինչ-որ վատ բան զգացին դրանց այդ դրութեամբ գիւղը գալուց, և առանց իրանց կորցնելու՝ ով զէնք ունէր վերցրեց և թռաւ գիւղի կարևոր դիրքերը։

Գիւղի բոլոր երիտասարդները միացած պատրաստ էին իրանց կեանքի գնով պաշտպանելու գիւղացիներին այդ անկոչ հիւրերից։

Յակովբ վարժապետը փորձեց ժողովի հրաւիրել ժողովրդին և մի լաւ դաս տալ, բայց հեռատես ժողովուրդը խուսափեց ժողովի գնալուց և առաջարկեց ձիաւորներին հեռանալ գիւղից և առիթ չը հանդիսանալ եղբայրասպան կռւի։

Գիշերը խմբի անդամներից մէկը գիշերելու պատրուակով գնաց տէր-Կորիւնի տանը քնելու. բայց որովհետև Յակովբ վարժապետը մի անգամ ժողովի մէջ 3 փամփուշտ էր կրակել տէր-Կորիւնի վրա՝ սպանելու նպատակով, նրան վարկաբեկել էին, կարգից գցել էին տունը և այլն և այլն, այդ բոլորն աչքի առաջ ունենալով՝ տէր-Կորիւնը իր մօտ եկած ամբողջ խմբից բաժանված միայն մէկ հոգուն գիշերը տեսնելով իր յարկի տակ՝ նրան թողեց իրա տանը գիշերելու, իսկ ինքը տիրուհուն վերցրեց և գնաց իր բարեկամներից մէկի տունը գիշերելու։ 15 հոգուց բաղկացած ձիաւորների խումբը՝ 4—5 օր իջած Թեւանենց տանը՝ կուշտ կերաւ, խմեց, վերցրեց գարի, խոտ, դարման, հաւ, ճուտ, ձու, մեղր, փլաւ և այլն և այլն ու թողեց հեռացաւ Խանագեահից՝ առանց կարողանալու խաղաղութեամբ համոզելով գիւղացիներին դիրքերից գիւղը իջեցնելու։

Այս դէպքից քիչ անց՝ «գործիչները» մըտածեցին խաներին էս սարսափի մէջ ձգել. և ահա պահանջվեց Քէյվանի շրջանից օգնութեան գալ Դդմարին։ Խեղճ քէյվանցիք, առանց իմանալու թէ ինչ կայ ինչ չը կայ, ձիաւորված՝ 30 հոգով եկան-թափվեցին Լիմա հայաբնակ գիւղը, որը ընդամենը 14 տուն բնակիչ ունի։

Այդքան տնից բաղկացած փոքրիկ և խեղճ գիւղը 7 օր ստիպված էր կերակրելու 30 մարդու և 30 ձիու, դեռ չը հաշւած կողմնակի եկող հիւրերին, որոնք «Թաշախուստի» համար գալիս էին ղարադաղցի «հայ կամաւորներին» տեսութեան, որոնք թէ ինչու համար էին «շնորհ բերել», այդ էլ անյայտ մնաց բոլորին։

Այդ բոլոր մանեօվրները տեսնում էին շրջապատի խաները, առանց հասկանալու թէ ի՛նչ է կատարվում հայերի ներքին կեանքում, վերոյիշեալ բոլոր գործողութիւնները այլ ստուերով ընդունում էին իբրև մի դեմօնստրացիա իրանց դէմ, ատամներ էին կրճտացնում, բայց և իրանց շատ մեծ զգուշութեամբ զսպում էին, ամեն կերպ աշխատելով որ կռւի նախանշանը իրանցից չը լինի կամ եղած դէպքում մի շատ օրինաւոր առիթ լինի, հարկ եղած դէպքում «շարիաթի» օրէնքի առաջ արդարանալու համար։

Խաները չէին մոռացել, երբ բոլոր հայերը համարեա թէ անխտիր Ղարադաղի գործիչների դրդմամբ մամուլներ էին բերում իրանց վրա, ղարաթ (վնաս) էին պահանջում իրանցից. նրանք չէին մոռացել այն անարգական և անկիրթ խօսքերը, երբ հայերը պետական մարդկանց ներկայութեամբ անգամ ասում էին. «Խան, մինչև այսօր դու ես մեր մայրը լացացրել, հիմա մենք քո կնոջը պիտի լացացնենք». աւելացի Թուրքը, քիւրդը այդ հայհոյական դարձուածքները, այն էլ իրանց կանանց հասցէին ուղղված, անկարող էին տանել, բայց որովհետև «տարին հայի տարի էր», լռում էին, սպասելով—ինչպէս իրանք են ասում—«Թուրքի տարվայ գալուն»...

Խաները չէին մոռացել, որ իբրև կալուածատէրեր արգելվել էին իրանց սեփական գիւղերը մուտք գործելուց, իրանց օրինական հողային տուրքն անգամ ստանալուց։ Նրանք բոլորը միացած երդվել էին «իրանց կեանքից մի օր պահել հայերի համար», և այդ մի օրը նրանք աչքի առած սպասում էին յարմար, որոշ չափով արդարացուցիչ առիթի. այդ առիթն էլ հեռու չէր, որովհետև մեր կեանքի բազմաղան ցեցերը միշտ գործում են և առիթը ինքնաբերաբար ստեղծում։

⁂

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՂ ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷ

Փուխարա, փուխարա, քիթդ սրբէ,
եղբ էլի փուխարա։

Մօտ 25 տարի անցաւ այն օրից, երբ առաջին անգամ սկսեցին մեզանից զինուոր տանել։ Սկզբում կովկասցի զինուորները առանձին գնդերով ու տեղական համազգեստով Կովկասում էին ծառայում, սակայն մի քանի տարուց յետոյ կովկասցիներին սկսեցին Ռուսաստանի խորքերը տանել։ Թէև մի կողմից մենք տխրում էինք, որ մեր եղբայրներին ու ազգականներին շատ հեռուներն են տանում, բայց միւս կողմից մխիթարվում էինք, ենթադրելով թէ կովկասցիները հեռաւոր տեղեր գնալով երկիր կը տեսնեն, մարդկանց հետ կը շփվեն, չարն ու բարին կը ճանաչեն, կեանքի մէջ կը փորձվեն և, ծառայութիւնից յետոյ՝ հայրենիք վերադառնալով, զարկ կը տան մեր երկրի կուլտուրական զարգացման։ Մօտ 25 տարի է, որ մեր երիտասարդները զանազան հեռաւոր երկիրներ խմբերով գնում ու գալիս են։ Նրանցից շատերը Ռուսաստանի միջին նահանգներում են ծառայել, շատերը Լեհաստանում, Մալօռուսիայում և շատերը նոյնիսկ Ֆինլանդիայում։ Ի նկատի առնելով մեր գիւղերի ներկայ դրութիւնը, մենք հիասթափվում ենք ու բացագանչում. «Մի՞թէ գիւղացի մեր տղերքը աչքերը փակ՝ այն տեղերը գնացին և աչքերը փակ տուն վերադարձան. մի՞թէ Լեհաստանի կամ Մալօռուսիայի բնորոշ գիւղական կեանքում ոչ մի լաւ բան չը տեսան, որը կարողանային հեշտութեամբ (առանց փողի) մեր գիւղերում մտցնել և մի՞թէ նոյնիսկ Ֆինլանդիայի գիւղական ժողովրդի կենցաղավարութեան եղանակներից ոչ մի լաւ օրինակ չը կարողացան վերցնել»։ Ո՞վ գիտէ, գուցէ հայրենիք վերադարձած գիւղացի հայ երիտասարդներից շատերը աշխատել են իրանց երկրում այս կամ այն բարեփոխութիւնը անել, սակայն հայ գիւղը այսօր դարձեալ նոյնն է ու նոյնը...

Մի կողմ թողնենք այն հարցը, թէ ինչ կարելի էր անել մեր ընդհանրապէս տնտեսական կողմի զարգացման համար։ Մի՞թէ մեր երիտասարդները այն երկիրներում առողջապահութեան կամ գոնէ միմիայն արտաքին մաքրութեան վերաբերմամբ էլ ոչինչ չըմբռնեցին, որ կարողանային իրանց բնակավայրում գործադրել։ Այո, մենք տգէտ ենք, ուսում չունենք, մենք աղքատ ենք, բայց մի քիչ մաքրութիւն պահպանելու համար ուսում կամ հարստութիւն հարկաւոր չէ։ Հարկաւոր է միայն ցանկութիւն և քիչ աշխատանք։

Առաւօտ է. անցնում եմ Ծաղկաձորի բազարով. եռում է կեանքը. առևտուրի ժամանակն է. ամեն կողմերից եկել են գիւղացիներ իրանց մթերքներով։ Ոմը ձու է բերել, ոմը կարագ, ոմը ճուտեր... Ծախողների մեծ մասը հայ գիւղացիներ են՝ Ծաղկունք, Մաքրավանք, Ռանդամալ, Քարվանսարա և ուրիշ հայաբնակ գիւղերից։

Տեսնում ես՝ նրանցից մէկը կարագ է ծախում. հաւատացած ես, որ կարագը անարատ կարագ է։ Նայում ես կարագին ու անցնում ես. առնել չես ուզում, մինչև անգամ գինն էլ չես հարցնում, որովհետև կարագի վրա նայելիս սիրտդ խառնվում է։ Շատ անգամ անտարբերութեամբ մօտով անցնում ես, բայց երբեմն համբերութիւնից դուրս ես գալիս և ուղղակի կարագ ծախողին ասում ես. «Բարեկամ, մի՞թէ այնքան էլ խիղճ չունես, չե՞ս տեսնում, որ կարագիդ վրա նայողը զզվում է. մի՞թէ չէիր կարող կարագը մի կարգին ամանի մէջ դնել և վրան բոյսերի տերևներով կամ մի կտոր մաքուր թղթով ծածկել, որ թոզ չը նստի»։ «Լաւ ես ասում, լաւ, աղա ջան»—պատասխանում է գիւղացին և միւս օրը դարձեալ նոյն տեսակ իր գործը շարունակում է։ Փնթիութեան շնորհիւ այդ տեսակ գիւղացիները իրանց անարատ ապրանքը կամ յետ են տանում տուն կամ ստիպված պակաս գնով են ծախում։

Տեսնում ես մի ուրիշը աղուխը փռել է գետնին, վրան մի քանի տասնեակ ձու է դրել, սպասում է առնողի։

Նայում ես ձուերին, դարձեալ ջղգրվում ես. «Բարեկամ,—ասում ես տիրոջը,—չէ՞ր կարող ձուերը բազար բերելուց առաջ թաց շորով սրբել. ամօթ չէ՞. չե՞ս տեսնում, որ ձուերը կուի մէջ կոլոլվել են»։ Լսելով նկատողութիւնդ, գիւղացին՝ զարմացած՝ վրադ է նայում։ Տեսնում ես մէկն էլ պանիր է ծախում. էհ, Աստուած պանիր համարէ. նայում ես «պանրը», տեսնում ես պանրի վերին աստիճանի կեղտոտ տոպրակը, դարձեալ վշտանում ես ու ակամայ մտածութեան մէջ ես ընկնում. գոյութեան կռիւ, առևտրական խելացի մրցումն սրանց համար դատարկ բաներ են։ Թողնում ես մթերքները և սկսում ես գիւղացիների իրանց վրա նայել և ուղղակի զարմանում ես ու ինքդ քեզ հարց ես տալիս։ «Չէ՞ որ սրանք մարդիկ են, աչք ունեն, բանականութիւն ունեն։ Մի՞թէ բնազդով կամ կեանքի դառն փորձով չեն կարողանում հասկանալ, թէ ո՛ր բանը լաւ է, ո՛րը վնասակար»։

Ամառ է, շոգ։ Կատուն որ կատու է, մազը փոխել է։ Բայց մեր գիւղացին... երեք-չորս հատ արխալուխներ մէկը միւսից հաստ, մէկը միւսից կեղտոտ ու աւելի պատառոտած՝ իրար վրա է հագել (կոճակների քանդվելուց կուրծքը կիսով չափ բաց է, սև մարմինն ու կեղտոտ շապիկը երևում են)։ Արխալուխների վրայից էլ քառասուն կարկատանով շալէ չուխա է հագել կամ պատառոտած ռուսական հաստ շինէլ։ Նայում ես գիւղացու հագուստին, նայում ես նրա տաք փափախին, գոյնզգոյն կարկատաններից հաստատած շալվարին, գուլպաներին ու բրդէ թօլլուխներին, մոլորվում ես՝ այժմ ամա՞ռ է թէ ձմեռ։ Չորս կողմդ ես նայում, գլուխդ երկինք ես բարձրացնում, երեսդ արևին ես դարձնում և համոզվում ես, որ ամառ է, կատարեալ ամառ, սակայն մեր գիւղացու համար ամառ-ձմեռ, սև ու ճերմակ, հաստ ու բարակ մէկ հաշիւ է։ Տեսնում ես բազարում և գիւղացի կանանց։ Նրանք էլ չորս - հինգ ղաթ շորեր իրար վրա են հագած և գլուխները լաթերով այնպէս են փաթթել, կարծես սուրբ Սարգսի թիփիներից պաշտպանվում են։ Տեսնելով այդ, մտածում ես. «Հիմա որ սրանք այսպէս հագնված են, ապա ձմեռը, յունվար ամսին ինչ պիտի հագնեն»։ Չես համբերում, կրկին որևէ գիւղացու եախից բռնում ես. «Բարեկամ,—ասում ես,—ինչի ես ամառ ժամանակ այդպէս հագնվել, չե՞ս տեսնում, որ ուրիշները, թէկուզ ձեր հարևան մօլոկանները, ո՛րքան բարակ և ո՛րքան մաքուր ու ճաշակով հագնված են։ Լաւ չէ՞ր լինի, փոխանակ այդքան արխալուխներ ու չուխա իրար վրա հագնելու՝ մի մաքուր շապիկ և հասարակ կտորից կարված կարգին մի արխալուխ հագնէիր, գլուխդ էլ էժան, մահուդէ թեթև գդակով ծածկէիր»։ Եւ գիւղացին այդ հարցերիդ պատասխանում է. «Մենք հայ ենք, հայ, ասխացի (ասիական) մարդ ենք, էսէնց ա մեր ադաթը»։ Բարկանում ես, ի հարկէ, և այդպէս ասող գիւղացուն խելօքն պատասխանում. «Եղբա՛յր, հայ եղի՛ր, հայ, քեզ ո՞վ է ասում՝ թէ հայ մի՛ լինի։ Հայ եղիր, բայց քիթդ սրբէ, դարձեալ հայ եղի՛ր»։ Հագուստի ու մաքրութեան վերաբերմամբ եթէ ուրիշների հետ էլ խօսելու լինես, կը տեսնես որ նրանք արդարանում են նրանով, թէ փուխարա են (չքաւոր)։ Նրանք կարծես դիտմամբ չեն ուզում հասկանալ, որ «քիթ սրբելու» կամ բազար տանելու կարագը՝ տերևներով ծածկելու համար փող պէտք չէ, այլ թեթև աշխատանք ու մաքրասիրութիւն է հարկաւոր։ Երբեմն էլ տեսնում ես, թէ ինչպէս գիւղացի տղան սաստիկ փոշի բարձրացնելով փողոց է աւլում։ Թէ ինքն է փոշու մէջ խեղդվում և թէ անցորդներին խեղդում։

Փոշին նստում է մօտակայ խանութների մրգեղէնների, հացի ու բանջարեղէնների վրա։ Տեսնում ես այդ, հոգեպէս դարձեալ տանջվում. տանջվում ես, որովհետև այդ աւլած տեղից քիչ հեռու առու է վազում, իսկ փողոց աւլող ծառան չէր մտածում այնտեղից մի քիչ ջուր բերել, ջրջկնել փողոցը, որ աւլելու ժամանակ փոշի չը բարձրանայ։ Նկատողութիւն ես անում և այդ տղային. խեղճն ասածդ նա կատարում է, սակայն կասկածում ես, որ նա այսուհետև ամեն օր այդպէս անէ։

Քաղաքներում գոյութիւն առած կուլտուրական միութիւնները, տնայնագործական ու գիւղատնտեսական հաստատութիւնները, բարեգործական ընկերութիւնն ու եկեղեցական հոգաբարձութիւնները իրանց ոյժերը ներածին չափ նիւթական զոհողութիւններ անելով աշխատում են զարկ տալ գիւղական կեանքի կուլտուրական զարգացման, իսկ իրանք գիւղացիք...

Մեր կեանքում շատ կան հնացած և վնասակար կարգեր ու սովորութիւններ, որոնց առանց կոպէկ ծախսելու շատ հեշտ կարելի է բարեփոխել, և այն երիտասարդները, որոնք օտարութեան մէջ եղած ժամանակ տեսել են բարեկարգ երկիրներ, եթէ չեն կարող իրանց գիւղերում մեծ-մեծ բարենորոգութիւններ անել նիւթական միջոց չունենալու պատճառով, գոնէ պէտք է օրինակ լինեն ուրիշներին և անեն այն բարեկարգութիւնները, որոնք բոլորովին փող չեն պահանջում։

Ցար. Խաչատրեան

Ծաղկաձոր.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՍԻԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԸ

III *)

Ընթերցողի աչքի առաջ դրված են երկու գործելակերպեր. իրանից է կախված ընտրութիւն անելը. հարկաւ նա պիտի կանգնի

ի վեր, տեսնելով որ իր մասին խօսք չը կայ, վեր կացաւ և ատենաբանեց, որ թակրիրներ տրվել են հարիւրաւոր անգամներ, երկար տարիների ընթացքում, և ոչ մի օգուտ չեն արտադրել. անհրաժեշտ է, որ դիմումն լինի յանուն հայ ազգի օսմանեան պարլամենտին, ուր մինչև այսօր այդ հարցը չարծարծվեց։ Կարճ վիճաբանութիւնից յետոյ որոշվեց յանձնել ատենապետների դիւանին պատրաստել մի յիշատակագիր՝ օսմանեան պարլամենտին ներկայացնելու համար և առաջարկել ի քննութիւն յաջորդ նիստին։

Ապա կարդացվեց Թիֆլիսի փոխ-առաջնորդ Եփրեմ եպիսկոպոսի մի գրութիւնը, որ առիթ տուեց շատ խիստ և կծու քննադատութիւնների թէ ժողովում և թէ ժողովից յետոյ երեսփոխանների կողմից և ընդհանուր ծիծաղ յարուցեց, նոյնիսկ դաշնակցականների մէջ, որոնք առ հասարակ թշնամաբար են տրամադրված դէպի Օրմանեանը։

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսից 101 ստորագրութեամբ մի հանրագիր էր ուղարկված ազգային ժողովին, որով ստորագրողները խնդրում են փութացնել Օրմանեան արքեպիսկոպոսի դատի քննութիւնը և լուծումը։ Այդ հանրագիրը ազգային ժողովը ուղարկել էր Թիֆլիսի առաջնորդարանին՝ խնդրելով վաւերացնել ստորագրութիւնների իսկութիւնը և վերադարձնել։ Եփրեմ եպիսկոպոս պատասխանել էր ազգ. ժողովին, թէ, ստորագրողներից շատերը ամառվան պատճառով մեկնած լինելով քաղաքից ամարանոցները և այլ տեղեր, ինքը հնարաւորութիւն չունի ստուգել, մինչև որ նրանք վերադառնան Թիֆլիս, իսկ այդ կարող է լինել սեպտ. ամսից ոչ առաջ։ Այժմ, Եփրեմ եպիսկոպոս, առանց սպասելու սեպտեմբերին, շտապել է վերադարձնել հանրագիրը ազգ. ժողովին և մի երկրորդ գրութեամբ յայտնել, թէ ինքն իրաւունք չունի վաւերացնել ստորագրութիւնները. եթէ ստորագրողները դիմեն իրան նոյնիսկ անձամբ և խնդրեն վաւերացնել։ Եւ իբրև պատճառաբանութիւն բերել է այն առարկութիւնը, թէ ծխական ժողովների կանոնադրութեան այս և այն յօդուածի զօրութեամբ ամեն մի որոշումն պէտք է կայացված լինի եկեղեցու մէջ, ծխական ժողովով, և քանի որ Թիֆլիսի վաճառականների հանրագիրը գրված և ստորագրված է ծխական ժողովից դուրս, ուստի նա անվաւեր է, եթէ նոյնիսկ 1000 հոգի ստորագրեն։

— Եփրեմ եպիսկոպոսը,—ասաց երեսփոխան Վ. Թեքէեան,—տարօրինակ տրամաբանութեան տէր մարդ կերևայ. կամ ինքն է տղայամիտ, կամ մեզ մանուկներու տեղ է դրեր։ Ի՞նչ հարկ կար սկիզբէն և եթ ձըգձըգել, ամարային շոգերը պատրուակ բռնել, քանի որ կարող էր սկզբէն յայտնել, թէ ինք չուզեր վաւերացնել։

Այդպիսի կարծիքներ շատ յայտնվեցին, մանաւանդ ժողովից յետոյ։

Դրանից յետոյ ատենապետը յայտնեց, որ Գանձակից ևս ստացվել է մի հեռագիր նոյն իմաստով, ինչպէս Թիֆլիսի հանրագրութիւնը, բայց քանի որ ստորագրութիւնները վաւերացւած չեն, հարկ չը կայ կարդալ։

— Ոչ,—ասացին երեսփոխաններից մի քանիսը,—նախ պէտք է կարդալ հեռագիրը, ապա որոշումն տալ։ Չը պէտք է մեր վարմունքով այն գաղափարը կազմել տանք ռուսահայերին, որ նրանց կողմից եկած դիմումները ենթարկվում են մերժումի։

Ձայների մեծամասնութեամբ ժողովը որոշում է կարդալ հեռագիրը, որ ունէր այսպիսի բովանդակութիւն. «Ի նկատի ունենալով, որ կաթողիկոսական գահին միակ արժանաւոր կանդիդատ համարում ենք Օրմանեան արքեպիսկոպոսին, առաջարկում ենք ազգային ժողովին անմիջապէս քննել և լուծել նրա դէմ եղած ամբաստանութիւնների գործը»։

Որոշվում է այս հեռագիրն ևս կցել Թիֆլիսի հանրագրին։

Ժողովն ապա լսում է Մ. Կիւրճեանի առաջարկը՝ կազմել մի յանձնաժողով, համազգային հանգանակութիւն բանալու Սասունի աղէտեալների համար։ Որոշվում է կազմել։

Ատենապետը, յայտնելով որ 71 օրինական թիւը չը կայ, յայտարարում է նիստը փակեալ։

Եւ այսպէս, ես չը կարողացայ ամբողջական գաղափար կազմել ազգային ժողովի մասին, քանի որ երկու կարևոր հարցեր, այն է՝ Հայաստանի հարստահարութիւնների խնդիրը, կաթողիկոսական ընտրելիների հարցը և կաթողիկ. պատգամաւորի ընտրութիւնը, որոնք պէտք է յարուցանէին բուռն վիճաբանութիւններ ժողովի երկու կուսակցութիւնների միջև, չը քննվեցին։

Որքան կարողացայ իմանալ, ազգ. ժողովի մեծամասնութեան մէջ դիտաւորութիւն կայ կաթողիկոսական պատգամաւոր ընտրել Մինաս Ջերազին, իսկ կաթողիկոսական ընտրելիներ հռչակել Բագրատ վարդապետին և Կարապետ եպիսկոպոսին։

Բայց այս մասին յետոյ։

Այժմ նորից մի քանի խօսք Թիֆլիսի և Գանձակի հանրագրերի մասին։

Թէ ես և թէ Ս. Սարուխանեանը, որ նոյնպէս Պոլսումն է այժմ, խօսակցութիւն ունենալով մի քանի երեսփոխանների հետ, նկատել տուինք, որ ազգային ժողովի վարմունքը—ստորագրութիւնների չը վաւերացման պատճառով՝ նկատողութեան չառնել այդ հանրագրերը—կարող է վիրաւորել ռուսահայերի այն դասակարգը, որը միշտ օգնութեան է հասել թիւրքահայերին։ Քանի որ, ըստ ռուսական օրէնքի, վաճառականների աւագը պաշտօնական անձն է, նրա վաւերացումը օրինական պէտք է համարվէր, որովհետև ազգային սահմանադրութեան պահանջած վաւերացումը առաջնորդարանի կողմից վերաբերում է միայն թիւրքահայերին և ռուսահայերին։ Երեսփոխանները պատասխանեցին, որ բնաւ դիտաւորութիւն չէ եղել վիրաւորել ռուսահայերին, այլ վաւերացնելու պահանջը ստիպված են եղել անելու այն պատճառով, որ Դուրեան պատրիարքի հրաժարման դէպքի առիթով դաշնակցականները սկսեցին գաւառներից զանազան հանրագրութիւններ տեղացնել, և ազգ. ժողովը վերջ տալու համար նրանց ամբոխավարական գրգռումներին՝ որոշեց մերժել այդ հանրագրերը, քանի որ նրանք վաւերացված չէին ազգային իշխանութիւնից։ Արդ, այժմ այդ որոշումը չը խախտելու համար, ստիպված էին նոյնպէս վերաբերվել և Թիֆլիսից եկած հանրագրութեան։

Եւ սակայն պէտք է ասել, որ Թիֆլիսի և Գանձակի հանրագրերը իրանց ազդեցութիւնն ունեցան։ Նրանք ազդեցին հասարակական կարծիքի վրա և ստիպեցին երեսփոխաններին՝ մտածել օր առաջ վերջ տալ Օրմանեանի գործին։ Այդ ազդեցութիւնն այնքան զօրեղ է, որ նոյնիսկ դաշնակցականները, որոնք գլխաւոր պատճառն էին մինչև այսօր գործի ձգձգման, փոխեցին իրանց տակտիկան, և այս օրերս «Ազատամարտի» մէջ երևաց մի առաջնորդող յօդուած, որ անիրաւութիւն հռչակելով Օրմանեանի գործի քննութեան յետաձգումը՝ սաստիկ բողոքում է այդ յետաձգման դէմ և պահանջում է օր առաջ քննել այդ գործը ու վերջնական որոշումն տալ։ Անարդարութիւն է,—ասում է յօդուածը,—թողնել Օրմանեանին երեք տարի դատի ներքոյ. կամ դատապարտեցէք՝ եթէ մեղաւոր է, կամ արդարացրէք՝ եթէ անմեղ է։

Դաշնակցականների դէպի Օրմանեանը ունեցած վարմունքի մէջ այս անսպասելի փոփոխութեան պատճառը շատերը կամենում են բացատրել և այն լուրով, որ այս օրերս տարածվեց Պոլսում, այն է՝ թէ Դաշնակցութիւնը բանակցութիւններ է վարում Օրմանեանի հետ նրա կաթողիկոսական թեկնածութեան մասին և պատրաստակամութիւն է յայտնում որոշ պայմաններով առաջ մղել այդ թեկնածութիւնը։

Թէ որքան ստոյգ է այս լուրը, որ, սակայն, զանազան աղբիւրներից լսեցի, երաշխաւորել չեմ կարող։

Հ. Առաքելեան

---

*) Տես «Մշակ» № № 200 և 201.

եւրոպականի վրա։ Այն վաճառականը կամ այն մարդիկ, որոնք ուզում են գործեր ստեղծել, նրանց առաջ ասպարէզը լայն է. ձեր առաջ կանգնած է Կովկասը իր բնական հարստութիւններով և զանազան հանքերով. սիրեցէք ընկերական գաղափարը, կազմեցէք զանազան ընկերութիւններ՝ մեծ թէ փոքր, մարդիկ ուղարկեցէք ամեն տեղ, որ լաւ ուսումնասիրեն այն տեղերը, ուր ապրանքներ են դուրս գալիս, և այն տեղերը, ուր սպառւում են. մի խնայէք ճանապարհածախսերը, որ կարող են լինել այստեղ կամ արտասահման, ձեռնարկեցէք վաճառականական, հանքային, գործարանական և այլ հիմնարկութեանց, գործեցէք՝ ինչպէս եւրոպացիք են անում. ձեռներդ ծալած մի նստէք, թէ ինչ է՝ եւրոպացին գայ և այն քիչն էլ, որ մեծ չարչարանքով ձեռք էք բերած՝ ձեռներիցդ առնի, և նրանից ստացած փողով լաւ կեանք վարէք. այդ դուք ես կարող էք անել այժմ. բայց ձեր յետագայ սերունդը ի՞նչ պէտք է անի. նա պէտք է հետզհետէ մատնվի աղքատութեան։

Վաճառականի առաջ կանգնած է հում ապրանքներ՝ բամբակ, բուրդ, լոժոժ, ցորեն, չոր մրգեղէններ և այլն և այլն. եթէ խելական առևտրական կարգուկանոնով տանելու լինէք ոչ մի օտար ֆիրմա արտահանելու խնդրը չէ կարող մրցել, քանի որ դուք մի առաւելութիւն ունէք, որ տեղացի էք։ Առևտրական տան բաժանմունքներ բացէք հեռու տեղերում, այնպէս արէք, որ ամեն կենտրոններից հարկաւոր տեղեկութիւններ արագ ստանաք։ Հաւատացէք միմեանց և այդ հաւատն ի չար մի գործածէք։

Խոշոր կապիտալիստի համար պակաս չեն գործերը. ահա ձեզ երկաթուղու մի որևէ փոքր գիծ կապալով վեր առնել և մի որոշ ժամանակից յետոյ յանձնել կառավարութեան. մանր կազմվելիք ընկերութիւններին մասնակցել կամ տոկոսով փող տալ, օգնութեան հասնել այն ձեռնարկութիւններին, որ դրամ լինելուց անշուշտ գործը կը բարգաւաճի և այլն։

Կովկասում ամեն տեսակ գործարաններ շինելու յարմարութիւններ կան. ինչ ասես, որ կարելի չը լինի հիմնարկել ընկերութիւնների միջոցով. մի հետևէք այն սիստեմին, որ կորստաբեր է լինում շատ անգամ. այսինքն՝ այսօր մէկը կաշու գործարան ունի, էլ կապկի նման նրա թիւերը մէջ աւելացնի, որ վնասվէք, այլ մէկը կտաւի, միւսը մետաքսի, մի երրորդը լուցկիի և այլն։

Այն մարդիկ, որոնք ուզում են էքսպլուատացիա անել հանքերը, նրանց առաջ կանգնած են այնպիսի հարստութիւններ, որոնք հողի տակ են և բանեցնող ձեռքի են կարօտ. օրինակի համար՝ պղինձը, երկաթը, արճիճը, շէնքի համար զանազան քարեր և այլ բազմատեսակ հանքեր. ինչո՞ւ չէք պլնդացնում ձեր դիրքերը, որ վերջում աղքատութեան չը մատնվէք։

Թիւրքիայի և մանաւանդ Պարսկաստանի հայերը կանգնած են մի առանձին դրութեան առաջ։ Ահա ձեզ Բաղդադի երկաթուղային գիծը, որ սկսվում է Պոլսից. ահա ձեզ անգլիական ծրագիրը՝ Թեհրանից մինչև Պարսից ծոցը, ահա ձեզ ֆրանսիականը՝ Տրապիզոնից Հայաստան, ահա ձեզ ռուսականը՝ Ջուլֆայից Թաւրիզ և ուրիշները։ Այս բոլորը միմեանց հետ կապեր պիտի ունենան. հայ վաճառականները կամ առանձին անհատները մտածում են արդեօք, որ այսօրվանից էժան հողեր առնեն այն տեղերում, ուր երկաթուղու կայարաններն են շինվելու. այժմեանից պէտք է դիրքեր բռնել, պատրաստվել, հում ապրանքներ առնելու և ծախելու ուսումնասիրութեամբ մտնել կոմբինացիաների մէջ եւրոպական տների հետ, այնպէս ցոյց տալ, որ առանց իրանց մասնակցութեան դժուար կը լինի գործ անելը, և այդ շատ դիւրութեամբ կաջողվի, քանի որ հայերը տեղացի են և ամենից աւելի կուլտուրական։

Վերջացնելով՝ ուզում ենք մի քանի խօսք էլ ասել։ Ֆրանսիայի տարածութիւնը չնչին մեծութեամբ հաւասար է Կովկասի տարածութեան. այնտեղ 42 միլիոն բնակիչ կայ, այստեղ՝ 12 միլիոն։ Ընթերցողին յայտնի է, թէ ի՛նչ զանազանութիւն կայ։ Եթէ Ֆրանսիայում վաճառականութիւնը, ինդուստրիան, արուեստը, գիտութիւնը և այլն հասել են իրանց գագաթնակէտին, ինչո՞ւ մեր բնութեամբ հարուստ Կովկասում կամաց կամաց չը կարողանանք հասնել. պակաս են միայն այն բաները, ինչ գրել ենք արդէն։

Եթէ մենք ուզում ենք սերունդից սերունդ գործ ունենալ, հարստանալ ու բարգաւաճել, մենք պէտք չէ մեր չարչարանքով ձեռք բերած գործերը ծախենք ուրիշներին, այսինքն օտարների վրա, թէ ինչ է՝ մի որոշ ժամանակի համար փող է ձեռք գալիս։

Քանի ուշ չէ, մենք պէտք է լուրջ կերպով սկսենք մեր գործունէութիւնը, ապա թէ ոչ՝ կարճ միջոցում օտարների հոսանքից տապալվելով պիտի աղքատանանք, բայց եթէ մենք եւրոպական ձևով կազմակերպվենք, այն ժամանակ նրանք մեզ հետ մրցութիւն չեն կարող անել։

Ահա մեր վերջին խօսքը։ Եթէ մենք մեր բոլոր գործերը շարունակելու ենք ասիական և հայկական կերպով, աւելի լաւ է ոչ մի հայ տեղից չը շարժվի անելու այն գործերը, ինչ որ գրել ենք. դրանք կը դառնան մի խայտառակութիւն. առանց այն էլ օտարները մեզ և մեր վաճառականութեան վրա խորթ աչքով են նայում. դա պակասը կը լրացնի. աւելի լաւ է՝ անհետանան այն փոքրաթիւ մարդիկ, քան թէ դրանց պատճառով մի ազգի ճակատին դրոշմվի, թէ խաբեբայ է։ Դուք կարող էք ասել, թէ այդ 100 կամ 1000 մարդկանցով մի ազգ չի արատաւորվի, բայց եթէ քիչ այստեղ, քիչ այնտեղ—ահա ազգի համբաւը նսեմացած։

Մարդ ամեն հանգամանքում իր մարդկային արժանաւորութիւնը պիտի պահպանի. մարդն է փող աշխատում. եթէ այդ աշխատանքը խարդախութեամբ է ձեռք բերվում, դա արհամարհվում է մարդկութիւնը գնահատողներից. այդ դուք կը նկատէք զարգացած երկիրներում։

Ուրեմն աշխատեցէք կուլտուրապէս առաջանալ, սիրեցէք ընկերական գաղափարը, գործեցէք ճշդութեամբ. խաբեբայութիւնը որոշ ժամանակ ունի և վատ վախճան. ձեր տեղը բռնելու համար արժանաւոր մարդիկ պատրաստեցէք. այսպիսով ազգի արժանաւորութիւնը իր տեղում պահպանած կը լինէք և կը դառնաք պարծանք այն ազգի, որին պատկանում էք։ Բալթ. Քալ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հանգանակութիւնը Բուխարայում

Նոր-Բուխարա, 1 սեպտեմբերի

Հին և Նոր Բուխարաներում ապրում են մօտ 40 տուն հայեր, որոնց հովւում է Ջարջուլի քահանան։ Հայերն այստեղ պարապում են վաճառականութեամբ և արհեստներով։ Ժողովրդի մեծ մասը արհեստաւոր դասակարգ է։ Տեղական հայերի մէջ նկատվում է համերաշխութիւն և կենսունակութիւն։ Թէպէտ բոլորն էլ ագէտ մարդիկ են, բայց գիտեն ժամանակի պահանջների համաձայն ապրել ու աշխատել։ Տեղական 40 տուն հայերը մինչև օրս չունեն մի աղօթատուն կամ դպրոց։ Ամեն անգամ երբ ծխատէր քահանան գալիս է Բուխարա, չը գիտէ ում մօտ իջնէ... Այս հարցը վերջապէս դրվեց հրապարակ, և ուրախ ենք արձանագրելու, որ լուծվեց մեծ աջողութեամբ։ Մի ննջեցեալի առիթով Ջարջուլի ծխատէր Գարեգին քհն. Ասրեանը եկած էր Բուխարա։ Սեպտեմբերի 1-ին, Յովհաննէս Ղարիբեանի որդու մկրտութեան ժամանակ, որտեղ հրաւիրված էին համարեա թէ բոլոր հայերը, ծխատէր Գարեգին ք. Ասրեանը երկար լուսաբանութեամբ ու ջերմ զգացմունքներով բացատրեց ժողովրդին սեփական աղօթատան համար գետին գնելու միտքը, որ կարող է և ժամանակի ընթացքում դպրոցի նպատակին ծառայել։ Բոլոր ժողովականները սիրով լսեցին և ընդունեցին տէր-հօր առաջարկութիւնը։ Իսկոյն այդ նպատակի համար հանգանակութեան թերթ պատրաստվեց և մի քանի բոպէի մէջ քահանան ժողովեց 425 րուբլի։ Այդ գումարը շահեցնելու համար ընտրվեց չորս հոգուց բաղկացած յանձնաժողով, որոնց ժողովուրդը լիազօրութիւն տուեց հանգանակութիւնը շարունակելու և քահանայի աջակցութեամբ ամեն ինչ կարգադրելու։ Յոյս կայ, որ կարճ միջոցում Բուխարայում հայերը կը գնեն մի յարմար գետին և կը սկսեն աղօթատան կամ դպրոցի շինութիւնը։ Այս օրինակելի քայլը պատիւ է բերում թէ ծխատէր քահանային և թէ Բուխարայի հայ ժողովրդին։ Նորեկ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Նախընթաց յօդուածներով մենք ցոյց տուինք հողային հարցերի շուրջը պտտող խնդիրների մասին մեզանում, որոնք իրանց այլ և այլ պայմաններով արտայայտվում են մեր հողային դասակարգերի շրջաններում։ Մենք ասացինք, որ հողային հարցերը այժմ՝ աւելի քան երբևիցէ՝ շատ են հետաքրքրում մեր երկրի ռաշպար դասակարգին, որի համար հողահասոյթները առօրեայ ապրուստի և տնտեսական բարւօքման գործում առաջնակարգ խնդիրների շարքն են անցել։ Այդ հանգամանքը անշուշտ առաջ է եկել նրանից, որ հետզհետէ բազմանալով տեղական ազգաբնակութիւնը՝ նրա համար զգալի է դառնում սակաւահողութիւնը, որի պատճառով նրա տնտեսական դրութիւնն էլ աւելի աննպաստ միջոցների մէջ է սեղմվում։

Երբ մի հողագործ նեղվում է իր հողահասոյթներով, իր սակաւահողութեամբ, շատ բնական է, որ նրա հողագործութիւնը, նրա գիւղատնտեսական ձեռնարկութիւնը ըստ կարգին չէ շահագործվում. ուստի այդ դէպքում, պարզ է, որ նրա աշխատութիւնը՝ կիսատ-պռատ լինելով՝ բաւականաչափ չէ վարձատրվում։ Այդպիսով ուրեմն հողային դասի հողային մշակութիւնը լինելով ոչ-լիակատար, դառնում է նրա համար մի անբաւարար զբաղմունք, որով թերևս չէ կարողանում իր բազմանդամ ընտանիքի տարեկան պաշարը ունենալ իր հողային սեփական մշակութիւնից, ուստի նա ստիպված է լինում իր ընտանիքի ուտեստի պակասորդը գնումներով լրացնել, որը շատ աւելի թանգ է նստում նրա համար, քան նա ինքը պէտք է արդիւնաբերէր։

Հողային հարցը երբ աւելի խիստ զբաղեցնում է գիւղական ժողովրդին, դա դեռ միտք ունի, քանի որ գիւղական ժողովուրդը գլխովին նուիրված է հողագործութեան և հողի մշակութեան և նա, գիւղական ազգաբնակութիւնը, գրեթէ գլխաւորապէս ապրում է հողային արդիւնաբերութեամբ և երկրագործական բերքերով։ Ապա ինչ կասէք, երբ նոյն իսկ քաղաքի ազգաբնակութիւնը նոյնպէս այժմ զբաղված է հողային հարցերով։ Վերջերս մեր քաղաքի հասարակութիւնը մի այնպիսի թափով է յանձնվել հողային խնդիրներին, որ նոյն իսկ նրա բացակայ անդամները, որոնք տարիներից ի վեր բնակվում են մեծ քաղաքներում (Թիֆլիս, Բագու, Բաթում և այլն), վերջին հողաբաժնութեան միջոցին վերադարձան այստեղ, յատկապէս հողահասոյթները ձեռքից բաց չը թողնելու համար *), չը նայելով որ նրանք իրանց աշխատութեան վայրերում (օտար քաղաքներում) կրկնապատիկ և նոյն իսկ եռապատիկ վաստակ կարող էին ունենալ, քան իրանց ստացած մի քանի «չվան» հողաբաժիններից մեր քաղաքում։ Եւ չը նայելով որ մեր քաղաքացի պանդխտողներից շատերը իրանց սեփական միջոցներով անկարող են լինում մշակել իրանց հողաբաժինները, սակայն նրանք այն աստիճան կապված են հողի հետ, որ ստանալով իրանց հողահասոյթները՝ զանազան պայմաններով **) տալիս են ուրիշներին մշակելու, իսկ իրանք չուում են օտարութիւն։

Պէտք է յիշել սակայն, որ այժմ սակաւահողութեան պատճառով ամբողջ հողագործութիւնը իր աչքերը յառած է դէպի ազատ արքունական հողերի շուրջը։ Այդ առիթով վերջերս թէ քաղաքիս մեշչանական հասարակութեան հաւատարմատարները և թէ շրջակայ գիւղականները խնդրագիր ներկայացրին պետական կալուածների գիւանատանը՝ արքունի ազատ հողերը (օրինակ «Ուչույուղլու») ձեռք բերելու համար։ Սակայն խնդրատուները այնքան բազմաթիւ են, որ արքունի գիւանատունը տատանվում է և չը գիտէ իսկապէս որին բաւականութիւն տայ։ Այդ պատճառով նա աւելի բարւոք է համարում այդ հողամասերը կապալով տալ խնդրատուներին՝ ժամանակաւորապէս օգտվելու նպատակով միայն։ Եւ ահա սկսվում է աճրդախօսութիւնը, ուր հողաբաժինների գնման բաղդը վճռվում է դրամի ոյժով, փողի կարողութեամբ։

Անցեալ օգոստոսի 31-ին, ի միջի այլ հողաբաժինների, նշանակված էր աճուրդ նաև «Ուչույուղլու» հողամասի վերաբերմամբ։ Աճրդախօսութեան մէջ գլխաւոր մասնակցողներն էին Նորադուզ և Դշլաղ գիւղերի ներկայացուցիչներ, գիւղատնտես Ա. Նիկողոսեան և քաղաքային աւագ Ստ. Բատիկեան։ Վերջինս քաղ. մեշչանական հասարակութեան կողմից լիազօրված՝ գնելու էր «Ուչույուղլու» հողաբաժինը քաղաքի հասարակութեան օգտին։ Այդ խոտատեղը այժմ արդէն գտնվում է Ա. Նիկողոսեանի ձեռքում, որը կապալով է վերցրել երեք տարի ժամանակով՝ 2700 ր. տարեկան վճարով։ Նա իբրև գիւղատնտես այդ ագարակի վրա ունի մեծ տնտեսութիւն (մօտ 70 կթի կովեր), և թէպէտ այս տարի լրանում է նրա պայմանաժամը պետական գիւանատան հետ, սակայն նա, Ա. Նիկողոսեան, 31-ի աճրդախօսութեան մէջ չը կամեցաւ իր նախկին կապալագնից (2700 ր.) աւելի տալ, գուցէ այն նկատումներով, որ իրեն ոչ ոք դրանից բարձր չի տայ։ Բայց գտնվեցին այնպիսի մարդիկ և հասարակութիւններ, որոնք «Ուչույուղլուի» տարեկան կապալագինը բարձրացրին մինչև 5,015 րուբլի։ Դշլաղի հասարակութեան մարդիկ հասցնելով այդ խոտատեղի տարեկան կապալագինը մինչև 5000 րուբլու՝ յետ քաշվեցին աճրդախօսութիւնից, ուստի այդ գնի վրա աւելացնելով 15 ր. քաղաքիս ներկայացուցիչը 3 տարի ժամանակով կապալով վերցրեց «Ուչույուղլու» արքունական հողաբաժինը 5015 ր. տարեկան կապալագնով, քաղաքի հասարակութեան օգտին ծառայեցնելու նպատակով։ Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 6 սեպտեմբերի

ՊԵՏՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ ՄԱՀԸ

Հայրենիքից հեռու, օտար երկրում, եկող համագիւղացիներից և հայ պարբերական լրագիրներից նոր միայն յայտնի եղաւ ինձ թօքերի բորբոքումից առաջացած Կարճևանի հերոս Պետրոս Աղայեանի վաղաժամ մահը, որը և մեծ վիշտ պատճառեց ինձ։

Սրտի անհուն կսկիծով ողբում եմ հերոս Պետրոս Աղայեանի մահը, և որպէս հայրենակից անձնական պարտքս եմ համարում անզօր գրչովս գոնէ կարճառօտ ծանօթացնել յարգելի ընթերցող հասարակութեանը նրա կենդանութեան օրերի վարք ու բարքերին։

Իւրաքանչիւր մի մարդ, ով մօտիկից ծանօթ է Պ. Աղայեանին, նոյնը կը պատմէ ինչ որ տողերիս գրողը։ Իր ամբողջ կեանքում Պետրոս Աղայեանը ինչպէս մարդ ընդօրինակելի էր. նա զանազանվում և աչքի էր ընկնում թէ գիւղամիջում և թէ գիւղական ամեն մի շրջանում իր խոհեմութեամբ, հեզ բնաւորութեամբ և ներողամտութեամբ։ Նա մեծի հետ մեծ էր և փոքրի հետ փոքր. իր ամբողջ կեանքում ոչ ոքի չէ հասցրել և ոչ մի վիրաւորանք՝ ինչպէս գործով, նոյնպէս և խօսքով։ Պետրոս Աղայեանը անցկացնելով իր ամբողջ կեանքը գիւղական խաւար մթնոլորտում՝ շնորհիւ իր ազնւութեան միշտ էլ վայելել է համագիւղացիների սէրը և յարգանքը՝ ոչ միայն իր քաջութեան շնորհիւ, այլև իր շիտակութեան ու բարեսրտութեան համար։ Նա չէր սիրում կռիւը, հայհոյանքը և բամբասանքը գիւղամիջում, մինչև անգամ ներում էր իր դէմ սխալ գործողին և վերջը պարզերես մնում։ Երկիւղը նրան չէր ազդում, երկչոտութիւն ասված բանը նա չը գիտէր, և դրանց ապացոյց կարող է լինել ոչ միայն այն, որ 1894 թ., երբ Նաբի աւազակապետը իր խմբով յարձակում գործեց Կ. գիւղի վրա, Պետրոսը ասիական հրացանով սպանեց խմբից ամենաքաջին (Նաբիի եղբօրը՝ Մէյթիին) և պաշտպանեց գիւղի պատիւը, այլ և ապացոյց է նաև այն հայրենասիրութիւնը, որ Թուրք-հայկական ընդհարումների օրերին, երբ Փիրղավղանի (Ղափանի շրջան) սարերում կռիւ է ծագում երկու հարևան ազգերի միջև, Պետրոսը վառված նամուսի վեհ սկզբունքով՝ իր մի քանի ընկերներով հասնում է օգնութեան կռւի ամենանեղ և վճռական բոպէներին ու՝ շնորհիւ իր գործ դրած հմուտ ջանքերի՝ կարողանում է գրոհ տալ բազմաթիւ խուժանին $^1/_4$ ժամում։

Գովասանքի և յիշողութեան է արժանի նաև հանգուցեալի կատարած այն դերը, որ երբ 1887 թ. սկսեցին հաւաքել զինւոր և հայ ազգից, Կարճևան գիւղից որպէս զինւորացու կանչված էր և Պետրոս Աղայեանը. ինձ ապշեցնում էր այն հանգամանքը, որ նա՝ Պետրոսը ինչպէս առաջին օրինակը գիւղից և նոյնիսկ անգրագէտ, առանց վհատվելու ժպտալից դէմքով վայր դրեց ձեռքից տարիներից ի վեր կրած հովւական սրինգն ու ցուպը, վայրի մարալների տրամադրութեան տակ թողեց կանաչ սարերի անոյշ բուրմունքն ու ձորերի սառնորակ աղբիւրների գլգլան ջրերը և ուրախ ու համարձակ դիմեց դէպի զինւորական ծառայութիւնը, որը վերջացնելով վերադարձաւ հայրենիք գրել-կարդալը սովորած...

Պետրոսը յաղթանդամ կազմուածք ունէր, թիկունքը հաստ և կուրծքը լայն. գիւղացիք նրան անուանում էին «ըղեց Պետրոս», որովհետև ծագումն ունէր «աղաց» ազգից. նա պարապվում էր հողագործութեամբ. շատ աշխատասէր և հմուտ ռաշպար էր։

Խոնարհվելով Կարճևան գիւղի «ըղեց» հերոս Պետրոսի թարմ աճիւնի առաջ, բարեմաղթում եմ հանգստութիւն նրա ոգուն և մխիթարութիւն հանգուցեալի ընտանիքին ու բարեկամներին։ Զ.-են

Կրասնօվօդսկ, 12 սեպտ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—օ—

ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

III*)

Մի ուրիշ խնդիր է, թէ ովքեր կարող են կաթողիկոս լինել՝ միայն եպիսկոպոսնե՞րը թէ ընտրելի են նաև վարդապետները, քահանաները և աշխարհականները։ Յայտնի է, որ այդ սկզբունքի խնդիրը երկար ժամանակ ծեծվեց մեր մամուլի մէջ, թեր և դէմ կարծիքների առիթ եղաւ, բայց մինչև այսօր դեռ ոչինչ չորոշվեց։

Կասկած չը կայ, որ հայոց եկեղեցու պատմութեան մէջ եղել են դէպքեր, երբ վարդապետը կամ նոյնիսկ աշխարհականը ազգային ընտրութեամբ բազմել է Լուսաւորչի Գահը։ Այդ բանն այլևս վէճի խնդիր լինել չէ կարող։ Ուրեմն հայոց եկեղեցու սկզբունքը և կանոնական իրաւունքը այդպիսի ընտրութիւնը բացարձակապէս չեն արգելում։ «Բացարձակապէս չեն արգելում» եմ ասում, որովհետև դժուարանում եմ ասել և իմ գիտենալով՝ անհնարին է ապացուցանել, թէ հայոց եկեղեցու կանոնական իրաւունքը այդպիսի ընտրութիւն թոյլ է տալիս։ Ինձ գոնէ այդպիսի «կանոն» յայտնի չէ, որով թոյլ տրված լինէր վարդապետների և աւելի հեռու գնալով՝ նաև աշխարհականների ընտրելիութիւնը։

Իսկ եթէ այդ այդպէս է, պատմութեան մէջ պատահած դէպքերը—եթէ վարդապետը կամ աշխարհականը կաթողիկոս է ընտրվել—պէտք է անհրաժեշտօրէն բացառութիւն նկատվեն, այլ ո՛չ երբէք օրէնք։ Եւ տրամաբանօրէն դատելով՝ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող. հակառակ դէպքում եկեղեցին ինքը ժխտած կը լինէր իր նուիրապետական կազմակերպութեան կարևորութիւնն ու գոյութիւնն իսկ։ Որովհետև՝ եթէ աշխարհականը կամ վարդապետը կարող են ուղղակի կաթողիկոս լինել, հարց է առաջ գալիս ըստ ինքեան, թէ այլևս ինչ հարկ կամ կարիք կայ եկեղեցական զանազան աստիճանների։ Եկեղեցու տեսակէտով՝ կաթողիկոս պէտք է լինի գործի մէջ եփված, փորձված եկեղեցականը, որն է անշուշտ եպիսկոպոսը. որովհետև եպիսկոպոս լինել կը նշանակէ ստորին եկեղեցական աստիճանների մէջ փորձվելուց, զտվելուց և եփվելուց յետոյ՝ զտվել և ի վիճակի լինել եպիսկոպոսապետի կամ կաթողիկոսի աստիճանին բարձրանալու։ Այս է իսկապէս եպիսկոպոսութեան նշանակութիւնը, որը սակայն դժբաղդաբար բոլորովին նսեմացած է՝ առանց ընտրութեան և ուշադրութեան, թիւրիմացութեամբ եղած եպիսկոպոսական ձեռնադրութիւնների հետևանքով։

Խնդիր է միայն այժմ, թէ մենք ներկայումս կարիք ունենք կրկին բացառութեան հարկին դիմելու և աշխարհական կամ վարդապետ ընտրելի առաջարկելու թէ ոչ։ Մի կողմ թողած այն հանգամանքն իսկ, որ Էջմիածնի սինօդի պրօկուրօրի դիմումի արդիւնքով կառավարութիւնն արգելք է դրել այդպիսի ընտրութեան առաջ, ես կասեմ ամենախորին համոզմունքով, որ մենք այսօր բացառութիւնների կողմը երթալու հարկ ամենևին չունենք, որովհետև արդի հայոց եկեղեցին իրապէս արժանաւոր եպիսկոպոսներ ունի իր կաթողիկոսական աթոռի համար։ Քիչ են, ճշմարիտ է, այդ արժանաւորները, բայց նրանք կան, և նրանց միայն այնպիսիները չեն տեսնում, որոնք կամ իսկապէս չեն ճանաչում հայ եպիսկոպոսներին և կամ զանազան միտումներ ունեն։ Պէտք է այն էլ ի նկատի առնել, որ ամեն ասպարէզ իր սկզբնաւորութեան, աշակերտութեան և ծառայութեան աստիճաններն ունի, և անհասկանալի է, թէ ինչո՞ւ միայն ամենայն հայոց հայրապետութեան ասպարէզը պիտի չունենայ այդ աստիճանական առաջխաղացումը։

Վերջապէս՝ եթէ հայոց եկեղեցին արդէն հասել է այնպիսի վիճակի, որ այսօր իր եպիսկոպոսների մէջ չունի կաթողիկոսութեան արժանի անձինք, ապա ուրեմն բոլորովին աւելորդ է հայոց կաթողիկոսութեան մասին մտածելն էլ։ Որովհետև եթէ եկեղեցին յիրաւի այդպիսի անկեալ վիճակի մէջ է, ինչ պիտի կարողանայ անել մի թէկուզ գերբնական կարողութիւններով օժտված աշխարհական կամ վարդապետ՝ կաթողիկոս դառնալով։ Նա միայն իր գլուխը պիտի մոլորի և ձեռնթափ լինի։

Բայց բարեբաղդաբար հայոց եկեղեցու դրութիւնը դեռ այդ աստիճան յուսահատական չէ։ Մենք ունենք մի քանի եպիսկոպոսներ, որոնք արժանի են ս. Գրիգոր Լուսաւորչի Գահը բարձրանալու և որոնք մեծ գործ կարող են կատարել, եթէ գտնեն բարեմիտ օժանդակութիւն հայ ժողովրդի, մանաւանդ հայ կրթված դասի կողմից։

Հետևեալ յօդուածում մենք կը տեսնենք, թէ ովքեր են առաջարկվում մեր եպիսկոպոսներից հայրապետական գահի համար և ո՛վ որքան յարմար է, մեր կարծիքով, կամ անյարմար այդ մեծ պաշտօնի համար։

Երուանդ Տէր-Մինասեանց

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Սեպտեմբերի 13-ի երեկոյեան Բորժոմից Թիֆլիս ժամանեց Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը և կայարանում դիմաւորվեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորօնցօվ-Դաշկովից։ Կայարանից Մեծ Իշխանը և Փոխարքան բաց կառքով եկան Փոխարքայի պալատը։

◆ Սեպտեմբերի 15-ին, Կովկասի Փոխարքայի պալատում Մեծ Իշխանին ներկայացաւ մի պատգամաւորութիւն, բաղկացած Թիֆլիսի քաղաքագլխից, քաղաքային վարչութեան անդամներից, դումայի ձայնաւորներից, վաճառականներից, մեշչանների աւագից և արհեստաւորների ներկայացուցիչից։ Քաղաքագլուխ Ա. Խատիսեան դիմեց Մեծ Իշխանին հետևեալ ճառով. «Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան կողմից՝ յանձին այստեղ ներկայ քաղաքային ինքնավարութեան, վաճառականութեան, արհեստաւորների և մեշչանների ընկերութիւնների ներկայացուցիչների՝ ես պատիւ ունեմ ողջունել Ձերդ Կայսերական Բարձրութեան մեր քաղաքը գործած այցելութիւնը։ Ձերդ Կայսերական Բարձրութեանը քաջ յայտնի են յարգանքի այն խորին զգացմունքները, որ տածում է քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը դէպի ի Տէր Հանգուցեալ Ձեր Ծնողի յիշատակը. Թոյլ տուէք ապա մեզ ևս, յանձին Ձերդ Կայսերական Բարձրութեան, ողջունել մեր քաղաքի բարձր քաղաքացուն, որը նոյնպէս միևնոյն զգացմունքներն է տածում դէպի իր ծննդավայրը, ինչպէս Ձեր Ծնողը։ Մենք ամբողջ սրտից շնորհակալ ենք Ձերդ Կայսերական Բարձրութեան ուշադրութեան այն մշտական նշանների համար, որպիսին ցոյց էք տալիս Դուք Ձեր սիրելի քաղաքին, և յոյս ունենք, որ Ձեր՝ Թիֆլիսում մնալը, մեր սիրելի Փոխարքայի պալատում, կարճատև չի լինի։ Բարի գալուստ Ձերդ Բարձրութեան»։ Մեծ Իշխանը շնորհակալութիւն յայտնեց քաղաքագլխին և պատգամաւորութեան բոլոր անդամներին ողջոյնի համար և իր կողմից գոհունակութիւն արտայայտեց, որ քաղաքը, որի մէջ նա երկար ապրել է, շատ մեծացել, գեղեցկացել և առաջադիմում է։ Ցանկանալով քաղաքին աւելի բարգաւաճում և, լսելով քաղաքագլխի բացատրութիւնները քաղաքի սուղ միջոցների մասին, Նորին Բարձրութիւնը սկսեց խօսակցել ներկայ եղողների հետ։ Սեպտ. 15-ի երեկոյեան Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանմէկնեց Բորժոմ։ Կայարանում ճանապարհ դրեց Փոխարքան։

---

*) Տարիներ առաջ քաղաքիս մեշչանների հասարակութիւնը որոշել էր բացակայ անդամներին հողահասոյթ չը տալ, իսկ վերջերս չքաւոր բացականերին որոշեց տալ։

**) Կիսբար, կապալով, երեսի արդիւնքը ծախելով և այլն, որոնց մասին կը գրեմ մի այլ անգամ։ Գ. Ս.

*) Տես «Մշակ» № 201.

◆ Վրաստանի թեմի առաջնորդական տեղապահ Եփրեմ եպիսկոպոսը Թիֆլիսի եկեղեցիներում կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնը նշանակել է առաջիկայ հոկտեմբերի 9-ին։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի Հասարակական Կլուբում (Բօրսայի դահլիճ) Տ. Մարգարեանը կը կարդայ ռեֆերատ «Ընտանեկան կրթութեան սկզբունքները» թեմայով։ Ռեֆերատի ժամանակ ցոյց կը տրվի երեխայի հոգին ուսումնասիրելու մի քանի մեթօդներ։ Ռեֆերատից յետոյ տեղի կունենայ զրոյց։ Վերջում կընտրվեն կլուբի նոր անդամներ։

◆ Վաղը, առ. ժամը 9-ին, Զուբալովեան Ժողովրդական Տանը բժ. Դիդիձէն դասախօսութիւն կը կարդայ «Սիֆիլիսը և թոքախտը» թեմայով։ Մուտքը ձրի է։

◆ Ոստիկանական տեղեկութեան համաձայն, սեպտ. 14-ին, Ցիցիանովի վերելքի վրա, էլեկտրական վագօնի հետ պատահած դժբաղդ դէպքի ժամանակ, մարդկանցից վնասվել են. 1) Պեսկօվսկայա փողոցում ապրող Ռաֆայել Դադարաշվիլին՝ առևտրական, որին անզգայ դրութեան մէջ տարան հիւանդանոց, 2) դրօգապան Վակուլէնկօ ջարդուածքներ ստացաւ ամբողջ մարմնից, 3) էլեկտրաքարշի միևնոյն վագօնի մէջ նստած բժիշկ Տիկօմաձէն ստացաւ ջարդուածք գլխից։ № 71 վագօնը կընքված է։ Կատարվում է քննութիւն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերայի բացումը

Օպերային ներկայացումները սկսվեցին Թիֆլիսում հինգշաբթի, սեպտեմբերի 15-ին, Գլինկայի «Жизнь за Царя» օպերայով։

Թատրոնը լիքն էր պճնազարդ հանդիսականներով, որոնք եկել էին ողջունելու օպերային ընկերակցութեան առաջին ներկայացումը։

Հասարակութիւնը բուռն հրաւիրեց ընկերակցութեան կառավարիչ և երաժշտախմբի ղեկավար Իվ. Պալիեվին, ջերմագին ծափահարեց և նուիրեց նրան ծաղկեպսակ։

Ներկայացումը թողեց նպաստաւոր տպաւորութիւն իր ամբողջութեամբ։ Խմբական երգեցողութիւնները, երաժշտախմբի նուագումները կրում էին իրանց վրա աջող ղեկավարութեան կնիք։

Գործող անձերի, երգիչների մեծագոյն մասը նոր մարդիկ են։

Սուսանինի դեր կատարող երգիչ Սերգէեվը ունի ախորժալուր բաս, որը թէև միատեսակ թանձր չէ բոլոր ելևէջներում, բայց բաւական կորով ունի։ Սերգէեվը երգում է խելացի, ճաշակով, իմաստալից պարբերութիւններով։ Ունի լաւ հասակ, գիտէ իրան պահել։

Նրա դուստր Անտօնիդայի դեր կատարող երգչուհի Րօստովսկայան ունի բարակ, քնքոյշ ձայն, ոչ-հիւթալից, բայց ընդունակ բոլոր աստիճաններում երգելու ազատօրէն։ Նա ստացաւ երկու ծաղկեփունջ։

Վանիայի դերի կատարող երգչուհի Կօվելկօվա լաւ օպերային ոյժ է։ Նա ունի ընդարձակ, հաճելի կօնտրալտօյի ձայն, երգում է գիտակցօրէն, գեղեցիկ արտասանելով երաժշտական պարբերութիւնները։

Տենօր Պօլիվօյ, որ կատարում էր Սաբինինի դերը, ունի գիլ ձայն, երգում է համարձակ, բայց հաւասարաչափ չէ երգում, ուստի թուլացնում է իր երգը և դերը։

Պարերը բաւական վարժ էին, տեսարանները բնորոշ։

Սիրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Երուանդ Տէր-Մինասեանց.—Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանց։ Կեանքն ու գործունէութիւնը. կաթողիկոսական ընտրութիւնների առթիւ, պատկերով, Մօսկվա, 101 երես, գինն է 25 կ.։

Շատ յարմար ժամանակին է հրատարակում Ե. Տէր-Մինասեանցը Կարապետ եպիսկոպոսի համառօտ կեանքն ու գործունէութիւնը։

Շնորհիւ վերջին անցկացրած պատմական տարիների, կարծես սովորութիւն է դարձել խօսել և քննադատել թեկնածուներին, մանդատներ տալ ապագայ ընտրեալի գործունէութեան համար, մի խօսքով նշաններ, որոնք ցոյց են տալիս ընտրողների որոշ հասունութիւնը ընտրողական պայքարում։ Ահա այս տեսակէտից ուրախալի է Կարապետ եպիսկոպոսի կենսագրութեան երևան գալը, ինչպէս նաև Ս. Զէրքէզեանի գրքոյկը «Օրմանեան սրբազանի գրպարտութեան ցանցերում»։

Ե. Տէր-Մինասեանցը գրքոյկը բաժանել է հետևեալ հատուածների։

1) Կարապետ եպիսկոպոսի համառօտ կենսագրութիւնը, 2) Կարապետ եպիսկոպոսն իբրև ուսուցիչ և տեսուչ Գէորգեան ճեմարանի, 3) Կարապետ եպիսկոպոսն իբրև հրապարակախօս և գիտնական, 4) Կարապետ եպիսկոպոսն իբրև առաջնորդ և 5) Կարապետ եպիսկոպոսն իբրև հոգևորական անձնաւորութիւն։

Գրքոյկը գրված է վերին աստիճանի սահուն և պարզ լեզուով և կարդացվում է հետաքրքրութեամբ։ Այդ բանին նպաստել է և Կարապետ եպիսկոպոսի կեանքը, որ եղել է ամբողջապէս մարմնացած աշխատանք։ Տարօրինակ ընդունակութիւնների տէր է եղել նա. աշակերտական նստարանից սկսած մինչև այժմեան Աստրախանի առաջնորդ ընտրվելը նա ցոյց է տուել եզակի յատկութիւններ, որոնց նկատելը և չը խոստովանելը մենակ յատուկ է հայկական իրականութեանս։

Մի մարդ, որ ցոյց է տուել գերմանացի քարոյախօս փիլիսոփայ Հերմանի վկայութեամբ այնպիսի պայծառ հասկացողութիւն և այնպիսի կատարեալ ու խոր ըմբռնողութիւն աւետարանի և առհասարակ քրիստոնէական կրօնի վերաբերմամբ, որպիսին ունէին Պօղոս եւ Լութեր, հալածվում է Էջմիածնից որպէս խորթ զաւակ և անընդունակ որդի։

Գովասանքի արժանի է Կարապետ եպիսկոպոսի նախկին աշակերտների յղացած միտքը՝ տալ իրանց նախկին ուսուցչի կենսագրութիւնը՝ ժողովրդին ծանօթացնելու համար նրա կենսագրութեան հետ, մանաւանդ որ Ե. Տէր-Մինասեանցը ինչ որ ասում է, այն և հաստատում է պաշտօնական վաւերաթղթերով և աղբիւրների յիշատակութեամբ, որ գրքոյկի առաւելութիւններն են կազմում։

Այս անգամ անցեալից դաս առնենք և ընտրենք այնպիսին, որ զոհ չը գնայ Էջմիածնի լճացած վանականութեան և կարգ-կանօն մտցնէ մեր ծխական-եկեղեցական դպրոցներում, բարեփոխելով այժմեանը։

Այդպիսիներից է ըստ իս և Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան, որի թեկնածութիւնը դնում է Ե. Տէր-Մինասեանցը իր համախոհներով հանդերձ։

Homo-novus

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իմ պատասխանը Քամալեանց Ս.-ին

Թիֆլիս, 11 սեպտեմբերի

Կարդացի ձեր «ակամայ», իրօք խուսափողական պատասխանը։ Դուք բուն խնդիրը թողած՝ ձեր անձն էք գովում և ուրիշի վրա յարձակվում. դա բացատրութիւն չէ։

Հարցը պարզ է. ձեզ ասում են, որ ձեր դասագրքերը նորագոյն ծրագրի համապատասխան չեն և յականէ յանուանէ յիշում են 19 կէտ, որ բաց էք թողել ծրագրից։ Դուք պատասխանում էք միայն երկուսին, իսկ միւսներից խուսափում էք. ընդունելի է, դա մի թիւրիմացութիւն է, որը ձեր համար փրկութեան ճիւղ է ծառայել։ Հապա ուր է մնացեալ տասն եւ եօթ կէտի պատասխանը։ Հարցը քանակի մասին չէ, 19 կէտը 17-ի վերածելով՝ խնդիրը չէք բացատրում. երկու կէտը կարող էր իսկի չը լինել, խնդիրը կը մնար նոյնը։

Բայց դառնանք ձեր ակամայ պատասխան կոչվածին, որի հիմքը շատ փխրուն է։ Դուք ասում էք. «Ամենից շատ ես եմ հետևել նորագոյն ծրագրի ոգուն»։ Այդ ոգին կայանում է նրա մէջ, որ Ա. տարվայ գրքից վանել էք գրաբար աղօթքները և շարականները։ Բայց մոռանում էք, որ լանելով գրաբարները՝ նրանց տեղը թւով աւելի աշխարհաբար աղօթքներ էք գրել։ Մոռանում էք, որ ծրագիրը մի հատիկ աղօթք է դնում, իսկ դուք՝ իննը հատ երգ ու աղօթք. և ինչո՞ւ համար։

Դուք աշխարհաբար աղօթքի վահանի տակ պարծենալով՝ մի այնպիսի լաբիւրինթոս էք մտնում, որտեղից դուրս գալ չէք կարող։ Սաները ում գրած աշխարհաբար լեզուով պիտի արտասանեն աղօթքները՝ Պալասանեանի, Րաֆֆու, Մամուրեանի, Տաշեանի... թէ Քամալեանի։ Ենթադրենք՝ մինը ուսել է ձեր թարգմանածով, երկրորդը մի ուրիշի։ Եւ ընդունենք այդ տարբեր թարգմանութիւններով սովորող սաները՝ տարբեր դպրոցներից՝ առիթ ունենան մի այլ դպրոցում լինել. խմբական աղօթքն ասելիս ինչ խառնակութիւն պիտի տիրէ։ Անշուշտ թարգմանութիւնները տարբեր-տարբեր նախադասութիւնների և բառերի դասաւորութիւններ կունենան։

Այլ խնդիր կը լինէր, եթէ ծրագիրն ինքը կամ հոգևոր իշխանութիւնը տրված լինէր իր անփոփոխ թարգմանութիւնը, որից ոչ ոք իրաւունք չէր ունենայ շեղվել։ Բայց քանի որ ի վերուստ այդ չէ տուած, պէտք է սպասել՝ խառնակութիւնից զերծ մնալու համար. հետևաբար վաղաժամ են ձեր աշխարհաբար աղօթքները։ Դուք ծրագրի ոգին չէք ըմբռնել։

Դուք ասում էք. «Կրօնի ուսուցումը հէքիաթներով սկսելը մեր նորագոյն ծրագրի մէջ ամենախելացի կէտն է, որ առաջինը ես եմ իրագործել»։ Համաձայն ենք, բայց ոգին էլի չէք ըմբռնել։ Նախ դուք ինքներդ էք այդ պատիւը ձեզ վերագրում. սուտ է. հանգուցեալ Ս. Բահաթրեանը 20 տարի առաջ իր «Մեթօդիկա» ուղեցոյցով, ընտիր առակներով դասաւանդել է մեր դպրոցներում։ Դուք լսել էք, որ հէքիաթներով սկսում են կրօնի առաջին դասերը, բայց ձեր՝ այսպէս անուանեալ հէքիաթները հէքիաթներ չեն, այլ արհեստական և շատ անգամ անըմնական պատմուածքներ, երբեմն իմաստների գումարումը հէքիաթի տեղ էք դնում։

Ծրագրում ասված է «առակներ և պատմուածքներ». դուք մի հատիկ առակ էլ չունէք իսկական առակի իմաստով, եղածները պատմուածքներ են, որոնց նմանները ամեն մի հայ լեզուի դասագրքում տասնեակներով կը գտնէք, և աւելի ընտիրները։

Հէքիաթներ, այո, պէտք է լինեն, բայց ոչ աշակերտների դասագրքերում, այլ՝ ուսուցչի ուղեցոյցում. դրանք նոր սկսող աշակերտների համար են, որոնք դեռևս կարդալ չը գիտեն։ Ո՞ւմ համար են ձեր դասագրքի հէքիաթ անուանեալները. այս է ծրագրի ոգին։

Դուք զլացել էք քրիստոնեային յատուկ խաչակնքելու նշանն անգամ ձեր դասագրքում, դուք ձեր նոր ոգով նորագոյն ծրագրից այդ էլ էք «վանել»։

Ձեր հանրածանօթ մանկավարժական ոգին փայլում է ձեր դասագրքերում. յիշենք գոնէ մի հատիկը իբրև նմուշ։ Ծրագրի 3—4 երեսում ասված է. «Առանց գայթակղութեան պատմութեան» (խօսքը Պետափրէսի կնոջ մասին է)։ «Յովսէփն ազնիւ դէմք և գեղեցիկ կազմուածք ունէր։ Պետափրէսի կինը անկարգ էր. ուզում էր իր ամուսնուն անհաւատարմութիւն անել և Յովսէփին իր համար ծածուկ ամուսին դարձնել...։ Վերջապէս մի օր, երբ տանն ուրիշ մարդ չը կար, կինը բռնեց Յովսէփի վերարկուից և պահանջեց որ իրան համբուրի» (ընդգծումը մերն է)։ Բ. տարի, երես 43։ Իսկ որ նոր ոգի է։

Ձեր դասագրքերին վնասելու դիտաւորութիւն չունենք և չենք կարող։ Եթէ նրանց մէջ արժանիք կայ, կապրեն, իսկ եթէ չը կայ, իրանք իրանց կը մահանան։

Ինչ վերաբերում է նրան, թէ ես «վարձկան եմ, կարճամիտ եմ...», դրանք էլ ձեր ոգու արտադրութիւններն են։

Եզրափակենք.—1) ձեր պատասխանը խուսափողական է. 19 կէտը 17-ի վերածելով խնդիրը չէ բացատրվում. 2) ծրագրի ոչ արտաքինը և ոչ ոգին էք ըմբռնել։

Ա. Փ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքիայի և Իտալիայի լարված յարաբերութիւնները մնում են նոյնը։ Եւրոպական մեծ պետութիւնների խմբակցութիւնները, լաւ կշռելով թէ ինչ անհուն հրդեհ կարող է ծագել յիշեալ երկու պետութիւնների զինված ընդհարումից, եւրոպական ապագայ «մեծ պատերազմի» առաջն առնելու նպատակով, աշխատում են մեղմել Իտալիայի և Թիւրքիայի բռնկված կրքերը և ամեն կերպ առհասարակ պատերազմի առաջն առնել։

◆ «Новое Время»-ն յայտնում է մինչև օրս անյայտ մի լուր, որ Ստոլիպինի կեանքի դէմ մահափորձ է կատարվել նաև Ձմերային Պալատում պահնորդական բաժանմունքի սօցիալիստ-յեղափոխական մի «աշխատակցի» ձեռքով։ Շնորհիւ բաղդաւոր պատահականութեան, Ստոլիպինին աջողվել է ազատվել մահից։

◆ Ստոլիպինը նախատեսում էր միշտ իր մահը։ Նրա կտակի առաջին խօսքերը սկսվում են՝ «Ես խնդրում եմ ինձ թաղել այնտեղ, ուր ինձ կը սպանեն»։

◆ Ներկայումս տիկին Ստոլիպինան զբաղված է մեծ եռանդով երևան հանելու իր ամուսնուն սպանելու դրդող բոլոր անձանց. որովհետև նա հաւատացած է, որ գործը շատ բարդ է։

◆ Լուրերին նայած, սենատորական քննութիւն է կատարվելու Ռուսաստանի քաղաքական խուզարկու ոստիկանութեան ամբողջ կազմակերպութեան մէջ։

◆ Ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականը որոշված է, բայց ոչ այժմ, որպէս զի խօսակցութիւններ առաջ չը գան կառավարական քաղաքականութեան ընթացքի փոփոխութեան մասին։ Կասսօն և ճան. հաղ. մինիստր Ռուխլովը ստանում են արձակուրդ երկու ամսով. հաւանօրէն նրանք այլ ևս չեն էլ վերադառնայ իրանց պաշտօններին։

◆ Խօսում են նաև ներքին գործերի մինիստրի օգնական Կրժանօվսկիի հեռացման մասին. նաև՝ երբ հաստատվելու է ներքին գործերի մինիստրի չորրորդ օգնականի պաշտօն։

◆ «С. М.»-ի թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից. «Առիթ ունեցայ խօսել մի շատ բարձրաստիճան անձի հետ, որը յայտնեց, թէ կաբինէտի վերջնական կազմը այսպէս է. մինիստր-նախագահ՝ ֆինանսների մինիստր Վ. Կոկօվցեվ, ներքին գործերի մինիստր՝ Ա. Մակարօվ, մինիստրի օգնական՝ Ն. Զօնդատտի, որը նշանակվել է այդ պաշտօնում համաձայն Ստոլիպինի կամքի. արդարադատութեան մինիստր Շչեգլօվիտովի տեղ նշանակվում է սենատոր Դեդիւլին, իսկ Կասսօյի փոխարէն ժող. լուս. մինիստրի պորտֆէյլը ստանում է պրօֆ. Կօնօվալօվը։

◆ «Колоколъ»-ը բոլորովին որոշակի ասում է, որ «ֆինն ազնուականները և վաճառականները որոշեցին վարձել ռուս յեղափոխականներին՝ սպանելու Ստոլիպինին, որը և արդէն կատարված է»։

◆ Բօգրովի հօր կարծիքով իր միամիտ որդին գործիք է եղել ինչ-որ գաղտնի, զօրաւոր ձեռքի։

◆ Պետերբուրգում այս օրերս կատարվեցին համատարած խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։

◆ Կիևում հրէական ջարդ սարքելու վտանգն անցաւ։ Քաղաքից փախած հրէայ ընտանիքները աստիճանաբար վերադառնում են։

◆ Պետերբուրգի համալսարանը վերստին ընդունում է անցեալ դասադուլի պատճառով արձակված ուսանողներին։

◆ Պետական Դումայի մի քանի անդամները տեղեկութիւն ունեն, որ Կիէվի պահնորդական միջոցները վերջին հանդէսների ժամանակ կլանել են 900,000 րուբլի ծախք։

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական գեներալ Կուրլօվը, Կիէվի դէպքերից յետոյ, ցոյց է տալիս հոգեկան հիւանդի նշաններ։

◆ Կիէվի պահնորդական բաժանմունքի գործերը քննելուց անմիջապէս յետոյ, սենատոր Տրուսևիչը ձեռնարկելու է քննել Պետերբուրգինը։

◆ Կիէվի պահնորդական բաժանմունքը կնքվեց։ Մուտքերի մօտ կանգնած են ոստիկաններ։ Բոլոր պաշտօնեաները հեռացված են։

◆ Հոկտեմբեր ամսում Պետերբուրգում կայանալու է երեխաների յանցագործութիւնների դէմ կռիւ մղողների համագումարը։

◆ «Новое Время»-ն յարձակվում է կովկասեան բարձր իշխանութեան վրա, որը իբր թէ, խրախուսելով պարսկական գաղթականութիւնը Լէնքօրանի գաւառում, այդպիսով անհնարին է դարձնում կռիւը աւազակութիւնների դէմ պարսկական սահմանագլխում։

◆ Ինչպէս լսել է «Руль»-ը, 1912 թ. յունվարի 1-ից «Россія» լրագիրը դառնալու է «Прав. Вѣст.»-ի ոչ-պաշտօնական բաժինը։

◆ Օդեսսայից հեռագրում են թերթերին. «Տեղս եկաւ նախկին շահի ռոտմիստր Գարաեվը։ Նա յայտնեց, որ Մահմէդ-Ալին Օդեսսա չի վերադառնայ։ Բաղէնից գալու է շահի կինը։ Օդեսսայում ապրում է նրանց 5-ամեայ որդին»։

◆ Նիւ-Եօրկում միլիարդատէր Մորգանը միւսների հետ հիմնել է ընկերութիւն ժամանակակից մարդկային բարոյականութիւնը բարելաւելու համար։ Մորգանի ասելով, մատերիալիզմը և քաղաքականութիւնը զրօյի են հաւասարեցնում արդի բարոյականութիւնը։ Կանայք իրաւունք չունենն մասնակցել յիշեալ ընկերութեանը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ։ Արշեվիշէ կամուրջից Սէնա գետն ընկաւ մի աւտոբուս։ Երեկոյեան լուղորդները հանեցին 9 դիակ և 10 վիրաւորվածի էլ տարան հիւանդանոց։ Պակասում են դարձեալ 4 հոգի։

ՌԷՋԻՕ ԴԻ-ԿԱԼԱԲՐԻԱ։ Փոթորիկից յետոյ հեղեղը ծածկել է Բանիարի կայարանը։ Շրջակայքում դատարկվել է։ Լուրերին նայած 25 մարդ խեղդվել են։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Կոպիոսի ոստիկանապետը պաշտօնանկ եղաւ հակաօրինական ժողով թոյլատրելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հօֆմէյստէր Բախմեթիէվը նշանակվեց դեսպան Միացեալ-Պետութիւններում։

ՏՕԿԻՕ։ Բաց թողնվեցին պետական գանձատան 25 միլիոն տոմսեր։

Կալանաւորվեց մինիստրի օգնականին վիրաւորողը։ Նա հիւանդանոցի սպասաւոր է։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։ Բուժման սէզօնը փակվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութիւնը բացատրեց, որ դեղատուն հաստատել թոյլատրվում է առանց միացած դեղատների տէրերի համաձայնութեան, ներքին գործերի մինիստրի հայեցողութեամբ։

ՄՕՍԿՎԱ։ Մի խումբ ձայնաւորներ յայտարարութիւն ներկայացրին յատկացնելու 10,000 րուբլի Ստոլիպինի մահարձանի համար։

ՕԴԵՍՍԱ։ Կանանց դասընթացքների վերատեսուչ ընտրվեց Նօվօրօսիյսկի համալսարանի պրօֆէսօր Կազանսկին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 **գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.։ **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.։ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.։ **Խառն գնացքը**՝ IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր.։ Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.,

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար** № $^{74}/_{75}$՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու)։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ։ **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և որանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ։ **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.։ **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՕՄ՝ **մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ 1 ժ. 38 ր. ցերեկ.։ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.։ **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր, առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր.՝ երեկ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.։ **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան։ **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ։

ԲՈՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագօնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պլացկարտի գինը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Գ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9$^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12$^{1}/_{2}$—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1$^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1$^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—1$^{1}/_{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6$^{1}/$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**
3. 0—93

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(ա. օ.) 669. 100—22

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլաեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։
(ա. օ.) 818. 25—20

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, ամսիս 18-ին, առաւօտեան ժամը 11-ին ս. Կարապետ եկեղեցում լինելու է ծխականների երկրորդ և վերջին ընդհանուր ժողով, կատարելու հոգաբարձական կազմի նոր ընտրութիւն և քննելու նոյն եկեղեցու երէցփոխի մի տարվայ հաշիւները. ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու չափահաս ծխականներին ներկայ լինելու ժողովին։
Գործակալ՝ Ղեւոնդ ք. Մամիկոնեան
898. 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՕՐԲԷԼ ՕՐԲԷԼԵԱՆԻ
Հիմնված 1844 թ.
Պատրաստվում են երկսեռ երեխաներ բոլոր միջնակարգ դպրոցներ մտնելու։ Ընդունվում են նաև երթևեկներ և գիշերօթիկներ։
(ա.օ.) 902. 3—1

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՆՈՐ ՄԵԹՕԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հաշուապահներից երեկոյեան խմբեր։ Ճշտապահական դասընթացներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ առ. ժամը 10—12-ը և եր. 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24/4.
(ե. հ. շ.) 862. 0—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.